



































































































































ճակատագրի հալածանքից ազատվելու համար: Այս լուրն անսահման ուրախություն պատճառեց ինձ: Ուրեմն մենք երկուսս նվիրվում էինք մեր ուխտին գրեթե միաժամանակ:

Գործերս կարգի բերելուց հետո ես միայն մի քանի շաբաթ մնացի բարեկամներիս հետ: Ապա պատրաստել տվի ինձ համար միանձնուհու սև սքեմ և այդ սքեմով էլ դուրս եկա քաղաքից: Վերջին անգամ իմ ծնողաց գերեզմանին այցելելով և վերջին անգամ նրանց շիրիմները համբուրելով՝ ես ճանապարհվեցա դեպի այս գյուղը՝ ընկերակցությամբ մի գյուղացու, որ առաջին անգամ հանդիպելուց՝ ինձ ճանաչեց իբրև միանձնուհի, կամ ինչպես ինքն էր ասում «ապաշխարող»:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ

Երբ այստեղ մտա, ինձ գրեթե ոչ քո չճանաչեց, չնայելով, որ երկու տարի առաջ այս գյուղումն էի եղած մորս հետ: Իմ առաջնորդի նման՝ գյուղացիներն ևս ընդունեցին ինձ իբրև իսկական միանձնուհու և սկզբից արդեն վերաբերվեցան ինձ հարգանքով:

Առաջին ծանոթս տեր-Հովսեփը եղավ, որի տանն էլ իջևանեցի: Բայց մինչև մի որոշ գործի ձեռք գարնելու, ոչ ոքի ոչինչ չհայտնեցի իմ դիտավորության մասին: Այժմյան եկեղեցուց ոչ հեռի՝ վարձեցի մի սենյակ և սկսա ապրել այնտեղ իբրև մի ճշմարիտ «ապաշխարող»: Իմ բնակարանի թեպետ գյուղի մեջ եղածներից լավագույնը, սակայն նա ոչ այլ ինչ էր եթե ոչ խոնավ, մութ, փոքրիկ պատուհաններով մի խցիկ: Դուրս գալ քաղաքի փառավոր տանից և ապրել գյուղի այդ տեսակ մի հյուղում, դա արդարև չափազանց զգալի էր ինձ համար: Ես դժվարությամբ էի շնչում այդտեղի խեղդված օդը և առավել ևս դժվարությամբ ընտելանում ինձ շրջապատող աղքատությանը: Երբեմն մինչև անգամ զղջման նման մի բան կարծես կամենում էր իմ կամքի հաստատությունը սասանել: Բայց երբ մտածում էի, որ այս ամենը դեռ «սկիզբն է երկանց», որ իմ ուխտին հավատարիմ մնալու համար դեռ պետք է ուրիշ շատ նեղությունների հանդիպեմ և որ վերջապես այս բոլորն այն մեծ ու սուրբ գործի համար է, որին նվիրվել է և իմ սիրելի ուսուցիչը և որն, անշուշտ, նստած է այդ բոլորին նույնպես մի խցում, այն ժամանակ նորեն արիություն էր գալիս վրաս, ես սկսում էի սիրել իմ մութ, աղքատիկ բնակարանը, իմ սև և տխուր սքեմը, իմ մենավոր, անպաճույճ կյանքը:

Ավելի շատ մխիթարվում էի, երբ, դուրս գալով իմ տնակից, մտնում էի գյուղական խղճուկ եկեղեցին աղոթելու և ապա պատահելով գյուղացիներին ու գեղջկուհիներին խոսակցում էի նրանց հետ իրենց ցավերի և կարոտությունների մասին: Նրանց պարզ և անկեղծիք բնավորությունը, մտերմական, բայց համեստ զրույցները, անմեղ և շատ անգամ նախապաշարմունքով լի դատողությունները ինձ և՛ հիացնում, և՛ զվարճացնում էին: Մի քանի ամիս շարունակ ես ուշադրությամբ դիտում և ուսումնասիրում էի գյուղացիների բնավորությունը, նիստ ու կացը, սովորությունները, ընտանեկան հարաբերությունները: Հետո կամաց-կամաց սկսա մտնել ընտանիքների մեջ և աշխատել կապել նրանց ինձ հետ՝ օգնելով յուրաքանչյուրին երբեմն խորհուրդներով, իսկ հաճախ գործով:

Ամենից առաջ ես ուշադրություն դարձրի գյուղի աղքատ և անօգնական ընտանիքների վրա և նրանցից յուրաքանչյուրի կարոտության չափն իմանալուց հետո, հորդորեցի հարուստ գյուղացիներին՝ օգնել նրանց ինչ բանով որ կարող էին: Եվ որովհետև գյուղացու համար օրինակն ամեն խոսքից զորավոր է, ուստի ամենից առաջ ես սկսա օգնել կարոտներին: Իմ սեփական միջոցներով գնեցի եգնեք, կովեր, այծեր և գյուղացուն պիտանի ուրիշ պարագաներ և բաժանելով այդ՝ ամենից ավելի կարիք ունեցողներին, նույնը անել հորդորեցի և հարուստ գյուղացիներին, այն է՝ իրենց ավելորդից մի-մի բան հատկացնել չունևոր դրացուն:

Մեծ եղավ իմ ուրախությունը, երբ տեսա թե իմ օրինակն ու հորդորը ապարդյուն չանցան:

Գյուղացիների մեջ զարթեց գեղեցիկ նախանձավորություն միմյանց օգնելու: Եվ այդ նորությունը ոչ

միայն հետզհետե գյուղի միջից հալածեց աղքատությունը, այլև գյուղացիների մեջ հաստատեց սեր և բարեկամություն, սովորեցնելով ընկերին՝ սիրել ընկերոջն և օգնել նրան:

Իմ երկրորդ գործն եղավ մի կանոնավոր ուսումնարանի բացումը: Տեր-Հովսեփը, ճշմարիտ է, ուներ յուր տան մեջ փոքրիկ դպրոց, ուր նահապետական ձևով մի քանի տղաներ էր կարդացնում, բայց ես համոզեցի նրան ընդարձակել այդ գործը:

Քահանան, առհասարակ, հեղինակություն ունի գյուղում, նա ժողովրդյան հոգևոր առաջնորդը լինելով, միննույն ժամանակ և նրա համոզմունքի կառավարը: Մի օգտավետ գործ առաջ տանելու համար պետք է աշխատել ամենից առաջ քահանայի հաճությունը վաստակել և, եթե կարելի է, նույնիսկ գործի սկսող և հեղինակ նրան հռչակել: Այդ բանը զգվում է քահանայի ինքնասիրությունը և նա փոխանակ գործին խափան դառնալու, ինքն է նրա հաջողության ճանապարհը հարթում: Մեր թերթերում շատ անգամ կարդում ենք գյուղական վարժապետի և քահանայի մեջ տեղի ունեցած ընդհարումների մասին լուրեր կամ հողվածներ: Ո՞վ է լինում արդար և ով մեղավոր, այդ շատ անգամ չի պարզվում, բայց ինձ համար գոնե մի բան մնում է միշտ պարզ, այն է՝ որ գյուղերում ծառայող մեր երիտասարդները, որոնք, անշուշտ, սիրում են իրենց գործը, չեն կամենում նույնիսկ ի սեր այդ գործի իրենց փառասիրության մի փոքրիկ մասը գոհել: Նրանք կամենում են հեղինակություններ ճանաչվել գյուղում, նույնը ցանկանում է և՛ քահանան: Երկուսի շահերն ընդհարվում են միմյանց, և այդ ընդհարման ժամանակ գործը վնասվում է: Բայց այդպես չպետք է լինի: Մեր վարժապետները, քանի որ ստիպված են գործել գյուղերում ոչ ավելի լավ, քան ինչ որ ունենք քահանաների հետ, պարտավոր են ի սեր գործի հաջողության՝ գոհել իրենց ինքնասիրությունը, նույնիսկ, ազնիվ փառասիրությունը: Թող գործի հեղինակ համարվի քահանան, թող նա՝ վայելե հաջողության փառքը, նա՝ լինի դարձյալ գյուղի առաջին հարգելին, միայն թե գործը հառաջադիմե: Հակառակելով քահանային և աշխատելով զցել նրա վարկը ժողովրդի աչքում, դրանով ոչ միայն դպրոցական գործի հաջողությանն ենք վնասում, այլև գործում աններելի հանցանք, սառեցնելով գյուղացու կրթական ջերմեռանդությունը, որն և պատճառ է դառնում նրա բարոյականի քայքայման, իսկ երբ տգետ գյուղացու մեջ մեռնում է բարոյականը, այնուհետև նա ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդակերպ մի հրեշ, որի խոսքերը զգվանք և գործերը սարսափ են բերում մարդու վրա:

Որպեսզի տեր-Հովսեփն իմ դիտավորության մեջ յուր սկսած գործի խափանումը չնկատեր, ես նրան հանձնեցի ուսումնարանն ընդարձակելու հոգսը: Հարկ չկա ասել, որ կարևոր խորհուրդներն ու հրահանգները ես էի տալիս, իսկ ժողովրդի առաջ միայն ինքն էր երևում:

Մեր ժամականավոր ուսումնարանը քահանայի ընդարձակ ներքնատան մեջ էր, ուր ձմեռը կրակ էր վառվում նույն նահապետական օջախում և ծուխը բարձրանում նույն վաղեմի երդիկով: Բայց նորությունն զգալի էր աշակերտների թվի մեջ, որ տասնհինգից հասել էր յոթանասունի, տեսակի մեջ՝ ըստ որում տղերանց հետ միասին սովորում էին և աղջիկներ, նույնպես դասավանդության եղանակի և առարկաների մեջ, որոնց մեծ մասը ես էի ավանդում:

Առաջիկա գարնան, ահա, այս ուսումնարանի շինության հիմը դրինք, որն և գրեթե նույն տարվա մեջ ավարտվեց: **Ճշմարիտ** է, գլխավոր և կշիռ ունեցող ծախսը ես արի, բայց գյուղացիներին էլ հորդորեցի մասնակցել գործին իրանց նպաստներով: Եվ այդ՝ ոչ թե նրա համար, որ իմ նյութական ուժը չէր բավում ամբողջ շինությունն ավարտելու, այլ որպեսզի նրանք հասարակական գործի համար գոհաբերություն անելը սովորեին: Այդ առաքինությունը, մանավանդ, անձանոթ էր այն ժամանակ այս գյուղացիներին, գոնե այն չափով, որպիսին ես էի պահանջում: Բայց բարի օրինակը վարակիչ դարձավ: Զարմանալի եռանդով ու ոգևորությամբ ձեռք գարկեցին նրանք գործին, ինչպես այդ անում են, առհասարակ \_\_\_\_\_, եկեղեցու շինության համար և շուտով ավարտեցին այն:

Ուսումնարանի շինությունն ավարտելուց և ուսման գործը կանոնավոր ընթացքի մեջ դնելուց հետո, ես քահանայի հետ շրջեցի մոտակա գյուղերը և ամեն տեղից էլ աշակերտներ հավաքեցի,

որպեսզի մեր դպրոցից միայն այս գյուղը չօգտվեր, այլ ուրիշներն ևս շահվեին: Այսպիսով, մեր գործը հետզհետե ընդարձակվելով եկավ հասավ նախանձելի դրության: Այնուհետև աշխատեցի ուրիշ գյուղերից բերած մի քանի ուշիմ աշակերտներից ուսուցիչներ պատրաստել և նույնիսկ իրենց գյուղերում փոքրիկ դպրոցներ հիմնելով նրանց կառավարության հանձնել, հարկավ իմ անմիջական հսկողության ներքո: Այդ գործն ևս, ահա քանի տարի է, շարունակվում է արդյունավոր կերպով:

Երբ դպրոցական գործը հաստատուն հողի վրա դրվեցավ, ես ուշադրություն դարձրի գյուղական եկեղեցու բարեգարդության վրա: Ոչ մի հաստատություն այնքան մոտիկ չէ գեղջուկի սրտին, որքան եկեղեցին, և ոչինչ այնքան չէ վառում, բորբոքում նրա սիրտն ու հոգին, մեղմում բարքի կոշտությունը, սանձում կրքերը և ընդունակ դարձնում նրան բարիք գործելու, որքան ախորժալուր երաժշտությունը, հանդիսավոր պատարագը և մշտամրմունջ աղոթքները: Նրանք, որոնք այս ժողովրդին վայրենի են համարում և անընդունակ՝ բարվո և գեղեցկի արժանիքը հասկանալու, չարաչար սխալվում են: Գյուղացին, ճիշտ է, լեզու չունեւր յուր զգացածն արտահայտելու և ոչ էլ շնորհք՝ նույնիսկ հիացման և հափշտակության ժամանակ յուր դեմքին քնքուշ արտահայտություն տալու, բայց նա բարվո և գեղեցկի ստրուկն է. նրա ոգևորությունը անօգուտ չէ անցնում, նրա զգացածը հեշտությամբ չէ մոռացվում: Իմ առաջարկություններից շատերը ես արել եմ այդ գյուղացիներին՝ մի հանդիսավոր պատարագից, կամ ժամասացությունից հետո, նրանց զգացված և ոգևորված միջոցին: Եվ այդ առաջարկությունները, որքան էլ որոշ դժվարությունների հետ լծորդված, այսուամենայնիվ ուրախությամբ ընդունել և անտրտունջ կատարել է ժողովրդի գոնե մեծագույն մասը, համոզված լինելով թե՛ ինչ որ հասարակության համար է անում, այն և յուր անձի համար է: Այս իսկ պատճառով եկեղեցու պայծառությունը դպրոցական գործի հառաջադիմության հավասար օգտավետ ճանաչելով ես աշխատեցի, որքան ուժերս ներում էին, առաջ տանել նրան և հասցնել այն դրության, որին ծանոթ եք արդեն:

Հետո կարգը գալիս էր գյուղացիների թե՛ ներքին ընտանեկան կյանքի և թե՛ նրանց դաշտային աշխատության մեջ մի քանի նորություններ մտցնելուն:

Հեռվից դիտողը այնպես է կարծում թե՛ գյուղացին սովորած լինելով պարզ ու անպաճույճ կյանքի, շատ աննշան էլ կարիքներ ունի, թե՛ նա միշտ գոհ է յուր վիճակից և թե՛, առհասարակ, նրան շատ քիչ բան է պակասում: Մի բան ճշմարիտ է. այն, որ գյուղացին տրտնջալու և ամեն անցորդի յուր ցավերը պատմելու սովորություն չունի: Նա գլխակոր և անմռունջ աշխատում է, ինչպես և յուր անասունը: Բայց նա ամբողջապես կազմված է կարիքներից: Այո՛, պետք է ապրել նրա ընտանիքում, տեսնել և շոշափել նրա աղքատությունը, ներկա լինել դաշտում նրա կրած տանջանքներին և չափել այդ տանջանքների գնով ձեռք բերած արդյունքի չնչին արժեքը, որպեսզի կարող լինի մարդ գաղափար կազմել գյուղացու կարոտությունների մասին:

Իսկ այդ կարոտությունները միթե կարծում եք թե՛ միայն նյութական օգնությամբ են վերացվում: Ոչ, նյութականը, հարկավ, ավելի մեծ և ավելի արագ գործ է կատարում: Բայց որտեղից ձեռք բերել այնքան նյութական օգնություն, որով ամեն գյուղացի կարողանա ապահովվել: Եղածը, հարկավ, կլինի ժամանակավոր նպաստ, վերջինի պակասելուց կարոտությունը դարձյալ երևան կգա նոր ուժով և այն լցնելու համար՝ գյուղացին դարձյալ կստիպի խնդրել:

Բայց կա, արդարև, գյուղացուն մշտապես կարոտությունից ազատող ապահով միջոց, այն է՝ սովորեցնել նրան ինքնօգնության, որը կայանում է յուր աշխատությունը և ստացած արդյունքը

տնտեսելու և խելացի կերպով գործադրելու մեջ: Այս միջոցն արդարև շուտով չէ լցնում գորացող կարոտությունը, բայց լինում է հաստատ և տևողական: Մի անգամ արդեն զարթեց տկար մարդու մեջ ինքն իրեն օգնելու գիտակցությունը, նա այնուհետև ապահովված է ամեն տեսակ կարոտությանց դեմ: Միակ, փոքրիկ դժվարությունը գյուղացուն այդ բանին վարժեցնելն է: Եվ ահա այդ նպատակով ես շարունակ աշխատեցի, ժողովներ կազմեցի, խոսեցի, բացատրեցի, նույնը նաև հաճախ քարոզել տվի տեր-Հովսեփին, մինչև որ վերջ ի վերջո հասա նպատակիս: Այժմ մենք ունինք այստեղ մի «հասարակաց շտեմարան», որին յուրաքանչյուր գյուղացի, տարվա մեջ ստացած յուր արդյունքից տալիս է տասանորդ ցորեն, գարի կամ կորյակ, նայելով թե՛ ինչ արմտիք ունի ինքը: Իսկ կարոտության ժամանակ նա անարգել օգուտ է քաղում այդ շտեմարանից փոխառաբար, այն պայմանով, որ պարտքը վերադարձնե որոշ տոկոսի հետ: Այդ շտեմարանին տասանորդ չեն վճարում միայն չունևորները, բայց կարիքի ժամանակ նրանք էլ համահավասար իրավունքով օգտվում են նրանից:

Մենք ունինք նույնպես «հասարակաց նախիր», որին ամեն մի ունևոր տարվա մեջ նվիրում է մի կամ երկու հորթ, նայելով, թե աստված որքան է պարգևել իրեն: Այդ նախիրը գնալով հարստանում է և մենք նրանցից լցնում ենք դարձյալ չունևոր ընտանիքների կարոտությունը մեկին մի կամ երկու կով նվիրելով, որ նրանց կաթով յուր երեխաները կերակրե, մյուսի դաշտը ձրիաբար հերկելով, երրորդի խոտն ու խուրձերը հանդից տուն բերելով, չորրորդի կալը կալսելով և այլն:

Ունինք նաև մի փոքրիկ «փոխատու գանձարան», որի հիմնական դրամագլուխը ինքս եմ հոգացել, դարձնելով այն գյուղական հասարակության սեփականություն: Այդ գանձարանից, ահա, հավասարապես օգուտ են քաղում թե այս և թե շրջակա գյուղերի բնակիչները իրենց կարոտության ժամանակ, կարողը մի թեթև տոկոս վճարելով, իսկ աղքատը՝ առանց տոկոսի փոխ առնելով: Այս փոքրիկ ըստ էության աննշան հաստատությունը, որի նմանը հարյուրներով կարող են հիմնել մեր հարուստները գյուղերում, բացի գյուղացու կարիքը ժամանակին լցնելուց և նրա աշխատող ձեռքերին ազատություն տալուց, փրկում է նրան, նաև, վաշխատուների ճանկերից: Վերջինները վաղուց է, ինչ հալածական են այս կողմերից:

Այս ամենը կատարելու հետ միասին, զգալի էր լինում միշտ մի կարիք, որ լցուցանելու համար, դժբախտաբար, ես բավական պատրաստություն չունեի, այն է սովորեցնել գյուղացուն յուր աշխատությունից առավել շահավոր եղանակով օգտվելու ճանապարհը:

Այդ նպատակին մասամբ հասնելու համար՝ ես բերել տվի գյուղատնտեսական գրքեր, երկրագործության, անասնապահության, հավաբուծության, մեղվապահության և կաթնային տնտեսության վերաբերյալ և շարունակ կարդալով ու ուսումնասիրելով նրանց, սկսա գործադրության հարմար եղածները սովորեցնել գյուղացիներին: Այդ նպատակով ես ձմեռ ժամանակ, դասից ազատ միջոցներին, հրավիրում էի գյուղացիներին ուսումնարանի դահլիճը և գրքերից ուսածներս պատմում և հասկացնում նրանց: Հավաքում էի հաճախ և գեղջկուհիներին և տնային տնտեսության վերաբերյալ հասկանալի դասեր խոսում նրանց: Այս նորությունները բոլորին էլ հավասարապես ուրախություն և գոհություն էին պատճառում:

Շատ անգամ անձամբ ներկա էի լինում տանը գեղջկուհու և հանդում գյուղացու արած փորձերին, նրանց չհասկացածները ես նորեն կրկնում, նորեն բացատրում էի և երբ փորձերից մինն անհաջող էր անցնում, քաջալերում, խրախուսում էի և փորձը նորեն կրկնել տալիս, մինչև ու հաջողությունը ձեռք էինք բերում:

Այսպիսով, ըստ իմովսանն, օգնում էի գյուղացուն յուր դժվարաքիրտն աշխատությունը բարվոք գործադրելու: Եվ որովհետև այստեղի ժողովուրդն ինքն ի բնե ուշիմ և ընդունակ է, ուստի իմ սովորեցրածները յուր ունեցած փորձառության հետ միացնելով կարողանում է հին

Ժամանակներից ավելի օգուտ քաղել յուր աշխատությունից:

Քաղաքներում ապրող մեր գործողներն, առհասարակ, այն կարծիքի են թե գյուղում գործելու ասպարեզ չկա, թե ձանձրությոն ու պարապությունը կարող են այստեղ մարդուն խեղդել: Մինչդեռ ես, չգիտեմ թե որքան ժամանակ էլ պիտի ապրեմ, որ գյուղական ժողովրդի մեջ կատարելիք կարևորագույն գործերի գեթ մի մասը կարողանամ կատարել: Քաղաքներին կյանք մատակարարողը գյուղն է, ինչպես և ազգի կենդանության ուժ տվողը գյուղացին: Ով որ կամենում է ազգի կենդանությունը գորացնել, նա պիտի գյուղը գործելու, ծառը ջրելու և ուռճացնելու համար նախ նրա արմատները պետք է հազեցնել...

Քույր-Աննան յուր պատմությունը, գրեթե, ավարտել էր: Այժմ ես գիտեի թե՛ այնքան շատ ինձ հետաքրքրող «միանձնուկին», ով էր: Սակայն մնում էր իմանալ էլի մի բան, այսինքն այն թե յուր թված բոլոր այս գեղեցիկ գործերը, որոնցից ավելին ինքս ամեն օր տեսնում էի իմ աչքով, արդյո՞ք նա առանց դժվարության և արգելքների էր սկսել և գլուխ հանել, թե հանդիպել էր նաև խոչընդոտների: Եվ եթե այս վերջինները եղել էին, ապա ինչպես նա, մի տկար կին, կարողացել էր կոպիտ գյուղացու ստեղծած արգելքների դեմ կռվել: Իմ այդ հարցին նա պատասխանեց.

— Աշխարհում ես չգիտեմ դեռ մի գործ, որի կատարելն ազատ լիներ արգելքներից: Գոնե իմ փորձերից սովորած՝ ես կարող եմ ասել, թե նույնիսկ ամենադյուրին կատարված գործը, կապ ունի միշտ մի արգելքի հետ: Սակայն այդ արգելքները կարծում եմ, միշտ էլ վնասակար չեն:

Ընդհակառակը, դրանք սովորեցնում են գործողին՝ յուր գործը դնել հաստատ հիմքի վրա, կամ ապագա չարիքների դեմ՝ դարձնել այն աննկուն ու գորավոր:

Արգելքների մասին եք հարցնում, օ՛, ես նրանց շատ եմ հանդիպել, թեպետ իմ պատմության ընթացքում և ոչ մինը հիշեցի: Եթե իմ նվիրման գործում զգացածս ուրախությունը թունավորվել է երբևիցե, այդ պատահել է հենց արգելքներից հզորագույնին հանդիպածս ժամանակ, մանավանդ, երբ դրանց դեմ կռվելու համար իմ ուժը նվազ և քաջությունն անբավարար եմ գտել: Բայց համբերությունն ու անվհատ աշխատությունը ոչնչացնում են, նույնիսկ, ամենագորավոր արգելքները: Այդ ճշմարտության ես հասու եղա, դժբախտաբար, մի փոքր ուշ, որովհետև համբերությունն էլ սովորեցնում է մարդուն փորձառությունը, որից ես գուրկ էի իմ առաջին ձեռնարկությունների ժամանակ:

Դժվար չէ ձեզ երևակայել, թե ո՞րքան մեծ էր լինում իմ տանջանքը, երբ մի օգտավետ գործ սկսելու համար ամեն ինչ մտածած, կշռած և կարևոր ծրագիրը կազմած, ուրախ ու հուսալիք դիմում էի գյուղացիներին և առաջարկում նրանց օգնել ինձ այդ գործն սկսելու, հանդիպում էի սառն ու

անտարբեր ընդունելության: Ճշմարիտ է, նրանք ինձ հարգում էին, ուստի և լսում ինձ հոժարությամբ, շատ անգամ էլ, նույնիսկ, գլուխները շարժում ի նշան համաձայնության, բայց դրանով էլ վերջանում էր նրանց ձեռնարկությունը: Ամեն ոք անտարբեր գնում էր յուր գործին և ես դարձյալ մնում էի միայնակ՝ իմ մտածմունքների և ծրագրերի հետ:

Դրանից հետո, ասենք, ես դիմում էի քահանային, խոսում էի նրա հետ ամբողջ ժամերով: Նա նույնպես ուշադրությամբ լսում էր ինձ և, մինչև անգամ, համոզվում, որ ես հասարակության համար օգտավետ գործ եմ առաջարկում: Սակայն մի բան արգելում էր նրան համաձայնվել ինձ հետ: Ինչ բան էր այդ, չգիտեի, միայն ինձ թվում էր թե՛ նա չէր կամենում այս դեպքում յուր խելքին հավատալ, նա վախենում էր թե՛ մի՞ գուցե յուր համաձայնությունից, կամ առաջարկածս գործից մի վնաս հասնե իրեն: Նույն ձևով էր վարվում և տանուտերը, երբ խոսում էի նրա հետ և սկսելիք գործի կարևորությունը բացատրում՝ իրեն մատչելի օրինակներով: Նա ինձ հասկանալով և իմ խոսքերից համոզվելով հանդերձ՝ խնդրում էր թողնել գործը մի ուրիշ անգամի, կամ գալ տարվան: «Մինչև այն ժամանակ գուցե, գյուղացիներին կարողանամ համոզել», — ասում էր նա և սակայն

այնուհետև գյուղացիների հետ ոչինչ չէր խոսում, կամ եթե խոսում էր, հարցն այն ձևով էր դնում, որ լսողները ոչ հետաքրքրվում և ոչ էլ ուշադրության էին առնում այն:

Ոչ մի բանից այնքան չէ խորշում գյուղացին, որքան այն նորություններից, որոնք հակառակում են գյուղի նահապետական սովորություններին: Գյուղացու այդ հատկությունը հարգելի է արդարև յուր ունեցած առաքինությունների ու խիստ բարոյականի նկատմամբ, բայց նույն հատկությունն անպայման վնասում է նրան, երբ խնդիրը գալիս է յուր աշխատությունը և արդյունագործելու հին եղանակը բարեփոխելուն, կամ գյուղի մեջ հանրօգուտ մի հաստատություն հիմնելուն: Նա դրանց դեմ էլ, համարյա, նույն ուժովն է կռվում, ինչ ուժով որ կկռվեր, եթե մինը համարձակվեր ձեռնամուխ լինել յուր բարոյականը խախտելուն: Ուղեղի ծուլությունն, առհասարակ, թագավորում է գյուղերում և այդ է պատճառը, որ գյուղացին խորշում է միշտ սկսել այն՝ ինչ որ չեն սկսել յուր հայրը, կամ պապը:

«Այդպիսի դեպքերում ես վերադառնում էի իմ խուցը տխուր և շատ անգամ հուսահատ: — Ինչ պիտի կարողանամ անել այս ժողովրդի համար, քանի որ նա ինքը չէ կամենում յուր բարին, — մտածում էի ես, — մի օր, այո՛, այն կարծիքին էի, թե ամեն ինչ կարող եմ անել, ամեն արգելքների կարող եմ հաղթել, բավական է, որ հաստատ կամք և գործելու եռանդ ունենամ... Բայց այժմ, ահա, տեսնում եմ որ բարիք գործելու համար էլ բավական չէ գործողի կամքը, այլ նրան պիտի միանա նաև բարիք ստացողի ցանկությունը: Այսպես էի մտածում, այո՛, բայց հետո տեսնում, որ մտածելով ոչինչ չէր առաջանում, պետք էր գործել: Եվ ես դարձյալ մտնում էի գյուղը, խոսում էի, հորդորում էի, որին էլ պատահում էի և վստահ էին իրենց հառաջադիմության նկատմամբ ունեցած սիրովրա: Այնուհետև ես ոչ թե խնդրում, այլ պատվիրում էի, և իմ պատվերները կատարում էին ճշտությամբ:

Ով որ կոչված է գյուղում գործելու, նա պետք է իմանա, որ գործ ունի քմահաճ մի երեխայի հետ: Ինչպես որ հոգատար դաստիարակը համբերությամբ և առանց հուզվելու տանում է երեխայի քմահաճությունները, չիրաժարվելով \_\_\_\_\_ սակայն շարունակ նրան ուղղելու, անհրաժեշտ միջոցներից և

նրա ընդունակության չափով, նրան բարին ու ազնիվը ներշնչելու պարտավորությունից, այդպես էլ պիտի վարվի գյուղի մեջ գործողը: Նա չպետք է նույնիսկ ինքնասիրություն ունենա կամ հուզվի ու վրդովվի, եթե այդ ինքնասիրությունը կոպտությամբ վիրավորեն: Նա ավելի առաքյալի, քան

հասարակ գործողի դեր պիտի կատարե: Գյուղում հնձելու ոչինչ չկա, դա մի խորդացած, խոպանապած երկիր է. պետք է հերկել, արորադրել այն, պետք է մշակել, պարարտացնել հողը և ապա թե սեր անել: Այդքանն է միայն մեր ժամանակի մշակների գործը: Իսկ այդ գործի ազնիվ պտղաբերության հունձը ուրիշ և ավելի բախտավոր ժամանակի մշակներ կանեն, օրհնելով, անշուշտ, այն անձնվեր նախորդներին, որոնք հմտությամբ մշակեցին երկիրը և «սերմանեցին գտերմն բարի...»:

— Որովհետև արգելքների մասին է խոսքը, — շարունակեց քույր-Աննան, — ես կարծում եմ, դրանց թվում պետք է դասել և այն արգելքները, որոնք երբեմն հասնում էին ինձ ոչ թե արտաքուստ, այսինքն դիմացի մարդկանցից, այլ նույնիսկ ինձանից: Կարող եք այդպիսի արգելքներ երևակայել: — Զգիտեմ, չեմ հասկանում ձեր խոսքը, — պատասխանեցի ես:

— Այո, այդպիսի արգելքներ գոյություն ունեին և կարողանում էին երբեմն խանգարել ինձ, — շարունակեց նա: — Միթե կարծում եք, թե հնարավոր է ապրել աշխարհում մոտ քսան տարի, սովորել կյանքի հրապույրներին, ի վերջո ջերմագին սիրել և այս ամենը միանգամից մոռանալ... ով որ չէ փորձել նա գուցե հասարակ աչքով նայե այդ բոլորի վրա: Բայց ես ասում եմ, որ դրանք մարդկային կյանքի ծանրագույն փորձերն են և դրանց բովից անվտանգ անցնելու համար պետք է



ունենալ ավելի ուժ, ավելի քաջություն, քան որքան այս դեպքում ենթադրելի է:

Պատահել է շատ անգամ, մանավանդ, արտաքին արգելքների հանդիպած ժամանակ, որ իմ ուխտը լեռան չափ ծանրացել է սրտիս վրա: Այդպիսի ժամանակները փափագելով փափագել եմ գտնվիլ կրկին իմ նախկին ընկերուհիների շրջանում, այն անհոգ, միշտ ուրախ և միշտ ծիծաղող հասարակության մեջ, ուր տխրությունը չէր կնճռում ճակատս, ուր ամենքը սիրում, զբաղեցնում էին ինձ, ուր կյանքը հրապույրով լի ծիծաղում էր ինձ...

Պատահել է, որ ես անձկությամբ ցանկացել եմ տեսնել իմ ծնողներին, մի անգամ էլ լսել նրանց քաղցր ձայնը, նրանց սիրապատար, անուշ խոսքերը, վայելել նրանց ջերմ գրկախառնությունը, սիրաշունչ համբույրը... Բայց նրանք չկային, այնպես չէ: Գոնե մի անգամ շիրիմները տեսնեի և իմ արտասուքով թրջեի նրանց... Պատահել է, որ ես հիվանդացել եմ. ինձ սիրով այցելել, ինձ համար հոգացել են գյուղացի կանայք, նույնպես և իմ սիրելի աշակերտուհիները: Բայց դրանց բոլորի մեջ հոգիս անձկությամբ պտրել է իմ հարազատ մորը: Ես կամեցել եմ լսել նրա ձայնը, զգալ նրա ձեռքերի շոշափը իմ այրվող ճակատի վրա... Հիշել եմ այն երջանիկ ժամանակները, երբ ես հիվանդանում էի, և նա անհանգիստ, սրտադող և շունչը բռնած, պտտում էր անկողնիս շուրջը, սիրով ու խանդով լի աչքերը դարձնում վրաս, ճակատս քնքշությամբ շփում, ձեռքերս ավերի մեջ ճնշում և անդադար «ինչպե՞ս ես այժմ իմ անուշիկ Աննա...», հարցնում ինձ այնպիսի իմ քնքուշ, խանդակաթ ձայնով, որ այժմ էլ հիշելուց սիրտս թուլանում է...

Իսկ ի՞նչ ասեմ ես նկատմամբ Գարեգնի, որ իմ կյանքի մեջ այս դժվարատար հեղափոխությունը մտցրեց: Միթե կարող էի նրան մոռանալ, նրան, որ իմ բոլոր մտքերի, խորհուրդների և գործերի հեղինակն էր. որին այնքան ուժգին, այնքան ջերմությամբ սիրեցի, բայց որն այժմ հազարավոր մղոն հեռու էր ինձանից: Երբեմն ժամերով նստած մտածում էի նրա համար: Նախկին կրակը բուռն կերպով արծարծվում էր իմ մեջ, փափագում էի տեսնել նրան մի անգամ, լսել նրան մի անգամ... հիշում էի մեր վերջին տեսակցությունը և նրա վերջին հրաժեշտի խոսքերը, «գնա սիրեցյալ քույրիկ,

ես օրհնում եմ քեզ, օրհնում եմ քո ճանապարհը, գնա, թող աստված լինի քեզ հետ», ասաց նա: Ես եկա և մարմնացրի նրա ցանկությունը: Բայց ո՞ր է նա ինքը: Ցանկանում էի, որ նա տեսներ թե ինչպե՞ս հավատարիմ մնացի իմ ուխտին, թե ինչպես, յուր սիրո պատճառով, կնոջ համար ծանրագույն խաչը ես բարձի... բայց նա չկար, չէր կարող տեսնել գոնե իմանայի, թե նա մտածում է իմ մասին, հիշո՞ւմ է նա ինձ, թե մոռացել է իսպառ... Եվ այս վերջին միտքը տանջում էր հոգիս: Այսպես, ուրեմն, թե՛ այս մտածությունները և թե՛ նորոգվող զգացումները նույնպես արգելքներ էին իմ ձեռնարկած գործին և մինչև իսկ, երբեմն, գորեղ արգելքներ: Հաճախ իմ հոգին թուլանում, ընկճվում էր դրանց ազդեցությունից, իմ աշխույժը նվազում և գործելու եռանդը հանգչում էր, որովհետև աշխարհային կյանքը դեռ ամբողջապես չէր մեռել իմ մեջ. նա օրհասական կո՞ղմ էր մղում այն բարձր ու սրբազան կյանքի դեմ, որ պատրաստվում էր շուտով իմ գոյությանը տիրել: Մակայն այս հոգեկան կո՞ղմներն իմ մեջ կատարվում էին, իհարկե, իմ նվիրման առաջին տարիներում, երբ մի կողմից էլ, ինչպես ասացի, արտաքին նեղություններն էին պաշարում ինձ: Ես սովորություն ունեի այդպիսի ճգնաժամերում կարդալ իմ հիշատակարանը և գլխավորապես նրա այն էջերը ուր իմ սիրելի ուսուցչի խոսքերն էին գրված: Նրանք ինձ մխիթարում ու քաջալերում էին: Մի անգամ այդպիսի մի հուզված ժամանակ, ես պատահեցի նրա այն խոսքերին, որ ասել էր հորս՝ իմ ձեռքը մերժելու ժամին. «Կա մի ուրիշ մարմին, որ ավելի սիրելի և ավելի պաշտելի է քան մեր սեփականը. այդ մարմինը Հայրենիքն է: Ես ուխտել եմ իմ անձը նրան նվիրել, նրա սիրուց գատ աշխարհում ուրիշ սեր չճանաչել, նրա ցավերից գատ ուրիշ ցավերով չվշտանալ, նրա բախտավորությունից գատ՝ ուրիշ բախտավորություն չխնդրել...»: Եվ այս խոսքերը մեծ-մեծ տառերով տախտակի վրա օրինակելով՝ կախեցի իմ սենյակի ճակատին: Այնուհետև ամեն օր

կարդում էի նրանց և հոգեպես կազդուրված իմ գործը շարունակում:

Բայց հետո, իհարկե, տարիները հոլովվելով՝ վաղեմի զգացումներն էլ հետզհետե թուլացան, մանավանդ որ ես շարունակ ճնշում էի նրանց: Իմ սկսած գործը գնալով մեծացավ, բարգավաճեց և իմ բոլոր հոգսերն ու մտածումները գրավեց: Այնուհետև շարունակ ես զբաղված էի այդ գործելով և իմ ուժը մինչև անգամ չէր բավում բոլորին: Ես ստիպված էի շատ բան թողնելու մեր քահանային, նախապես նրան գործելու եղանակը սովորեցնելով: Եվ տեր-հայրը, պետք է խոստովանել, ամենահավատարիմ հետևողը դարձավ իմ օրինակին:

Իսկ այժմ, երբ ես դառնում նայում եմ իմ այս քսանամյա գործունեության վրա, տեսնում եմ թե ինչպես մի տկար կնոջ կամքը կարողացել է այսքան գործ կատարել, հրճվում, մխիթարվում եմ և շարունակ օրհնում իմ սիրելի և իմաստուն ուսուցչին, որ յուր հոգեշունչ խոսքերով վառեց, բորբոքեց իմ սիրտը և ուխտել տվավ ինձ այս սրբազան ուխտը: «Հեռացեք աշխարհից, բայց մի մտնեք կուսանոց, — ասաց նա ինձ. — գնացեք հեռու-հեռու, դեպի կորած հայ գյուղերը, դեպի այն ժողովուրդը, որին \_\_\_\_\_ մոռացել են մեր գործողները, որի մեջ օրըստօրե նվազում, հանգչում է կենդանության ուժը, գնացեք այնտեղ, ուր տգիտությունը բռնացած քանդում, ավերում է ինչ որ պատմական ժամանակներից մնացել է գեղեցիկ և հարգելի: Մտեք այդ ժողովրդի մեջ. նվիրեցեք ձեզ նրա բարօրության և նրա մանկանց կրթության գործին: Սովորեցրեք նրան ճանաչել յուր անցյալը, բարվոքել ներկան և գործել ապագայի համար: Ուսուցեք նրան հարգել իրեն, սիրել ընկերին և պաշտպանել նրան, երբ հարկը պահանջե...»: Ես լսեցի իմ ուսուցչին և հեռացա աշխարհից, ահա՛ իմ բոլոր պատմությունը...

Մեպտեմբեր 15, X. քաղաք:

Երեք ամիս շարունակ մնացի Ն. գյուղում և անցուցի այդտեղ ամենաքաղցր և հիշատակի արժանի օրեր: Բացի մենավոր և որսորդական զբոսանքներս, որոնք հարուստ բնության ծոցում լինելուն համար մեծ հաճույք էին պատճառում ինձ, ես բախտավոր էի նաև նրանով, որ շարունակ վայելում էի քույր-Աննայի սիրելի և անգուգական ընկերակցությունը: Թեպետ ես արդեն դադարել էի նրա գեղեցիկ ստեղծվածներով հիանալուց, ըստ որում նրանց պատահում էի գրեթե ամեն քայլափոխում, այսուամենայնիվ, դեռ նրա զրույցներն ու կարծիքները լսելու ծարավ էի: Այս պատճառով կցանկայի երկար ապրել այդ գյուղում և երկար վայելել ազնիվ կույսի ընկերակցությունը: Դժբախտաբար օգոստոսը վերջանում էր, և ես պետք է վերադառնայի քաղաք, որովհետև անձնական գործերս չէին ներում ավելի ուշանալ: Գրեթե այս միակ պատճառով իմ հյուրընկալ տեր-Հովսեփը, ցանկանալով արտաքո կարգի մի պատիվ անել ինձ, որոշեց յուր որդու՝ Հակոբի հարսանիքը իմ ներկայությամբ կատարել:

— Գյուղացիներս, առհասարակ, ձմեռն ենք ազատ, — ասաց նա ինձ մի օր, — և մեր հարսանիքները, գլխավորապես, այդ ժամանակն ենք անում: Բայց որովհետև ցանկանում եմ, որ դուք իմ որդու հարսանիքը տեսնեք, այդ պատճառով որոշեցի այս ամսում կատարել: Ես, իհարկե, շնորհակալություն արի տեր-հորը՝ ինձ արած պատվի համար, որից չէի կարող հրաժարվել, եթե մինչև իսկ կամենայի, որովհետև դրանով վիրավորած կլինեի քահանային: Այդ հարսանիքը տեղի ունեցավ: Հակոբի հյուրերի հետ, որոնք բաղկացած էին գյուղի երիտասարդներից, ես էլ գնացի մոտակա շենը, ուսկից և բերինք նրա նորատի և գեղեցիկ հարսնացուն: Գեղեցիկ եմ ասում նրա համար, որ ճանապարհին հաջողվեց ինձ մի վայրկյան տեսնել նրա երեսը, որ ծածկված էր թանձր, կարմիր քողով: Հարսանիքը, հակառակ իմ սպասածին, կատարվեց շատ պարզ և անպաճույճ ձևով: Ուրիշ գյուղերում տեսել էի, որ նա տևում է երեք կամ չորս օր և այդ բոլոր ժամանակ ամբողջ գյուղն ուրախության և զվարճության մեջ է լինում: Կովեր ու եզներ են մորթում, զինին ու օղին ջրի պես է հոսում, իսկ հրավիրյալները հարսանիքատան ներսն

ու դուրսը լցված՝ ուտում, խմում են. մանավանդ, երբ հարսանիքը գյուղի հարստին է պատկանում: Բայց այստեղ տեր-հայրը միայն մի օր ուներ հացկերույթ և այն շատ պարզ պատրաստությամբ: Իմ հարցին թե ինչու այստեղի գյուղացիք ուրախանալ չգիտեն, քույր-Աննան պատասխանեց, — Գյուղացիք ամեն տեղ էլ նույնն են: Մանավանդ սյունեցիք ավելի շքեղ տոներ կատարել գիտեն: Իմ նոր եկած տարիները ես այստեղ յոթ օր շարունակ հարսանիք եմ տեսել և սարսափել, որովհետև այդ ուրախության մեջ գյուղացու տան իսկական ավերումն եմ նկատել, մանավանդ, երբ իմացել եմ, որ դրանցից շատերը պարտքերով են այդ ուրախությունը կատարում: Յուր չնչին փառասիրությունը գոհացնելու համար, գյուղացին քաղաքում պարտք է վերցնում տոկոսով և երկու երեք օրվա մեջ փոխ առածն սպառելով հավիտյան ստրուկ է մնում վաշխառուի ձեռքին: Այնուհետև նրա տունը, տեղը, անասունը, այգին վաշխառուի ստացվածքներն են: Պարտապան գյուղացին դողալով է յուր պարտատիրոջ երեսը ելնում: Նրա տարած ընծաները՝ կաթ, ձու, մածուն, կարագ կամ հավ, որ նա շարունակ յուր երեխաների բերանից է խլում, վաշխառուն ընդունում է իբրև իրեն հասանելի եկամուտ, սակայն առանց գյուղացու պարտքից մի սև փող իջեցնելու: Եվ ինչու համար այս բոլորը — միայն մի քանի օր զվարճանալու և հարևաններին զվարճացնելու՝ համար:

«Սակայն շատ տարիներ են, ինչ այս գյուղում այդ շռայլությունները վերացել են: Գյուղացին, առհասարակ, ինքն էլ ուրախ է լինում, որ այդ ծանրության տակ չմտնե, միայն թե ընկեր-հարևանից է ամաչում: Պետք է մինը լինի, որ ամենքին հավասարապես հորդորե այդ կորստաբեր ճանապարհից հեռանալ: Եվ նրանք կլսեն նրան: Ահա այդ դերն էլ ես հանձն առի, ժամանակին խոսեցի, բացատրեցի, նույնիսկ քահանային քարոզել տվի եկեղեցում, որից հետո գյուղացիներն իրենք արդեն եկան և մեր ներկայությամբ համախոսական ստորագրելով որոշեցին վերացնեն իրենց միջից ամեն ավելորդ ծախս, որը սովորություն ունեին նրանք անելու թե՛ ուրախության և թե՛ տրտմության ժամանակ: Հակառակ վարվողը տուգանք պիտի վճարեք գյուղական գանձարանին: Այդպիսի տուգանք, իհարկե, դեռ մինչև այսօր չէ մտել մեր գանձարանը, որ ապացուցանում է թե գյուղացին ինքը շատ գոհ է այդ որոշումից: Այստեղից օրինակ են վերցրել և հարևան գյուղերը, հույս ունեմ թե՛ ուրիշ հեռու տեղեր էլ կհետևեն այս բարի սովորության:

Կարող էի միթե չհամակերպվել քույր-Աննայի այս մտքերին, որոնք, որքան էլ պարզ և հասարակ երևային, այսուամենայնիվ, ամփոփում էին իրենց մեջ գյուղական ընտանիքի հաստատության պայմանները:

Հակոբի հարսանիքից մի քանի օր հետո քույր-Աննան հայտնեց ինձ որոշ նորություն, այն է թե շուտով պիտի կատարել տա յուր ձեռնասուն վարժուհու և վարժապետի պսակը:

— Եթե տեր-հայրը յուր որդու հարսանիքով կամեցավ պատվել ձեզ, ես էլ իմ որդեգիրների հարսանիքով կպատվեմ, — ասաց քույր-Աննան ժպտալով: — կցանկանայի նաև, որ դուք լինեիք նրանց խաչեղբայրը. այդ մեծ՝ ուրախություն կպատճառեք իմ որդեգիրներին, բայց գյուղական սրբագործված սովորության դեմ չպետք է մեղանչել: Նրանց ծնողներն արդեն ունին իրենց հին կնքահայրը, որի ընտանիքի անդամները, նույնիսկ որդոց որդի, պիտի կատարեն այդ պաշտոնը փոխադարձաբար: Մենք ուրեմն չենք խառնվիլ նրանց իրավունքներին: Դուք կլինիք հարսեղբայր: Ես ուրախությամբ ընդունեցի քույր-Աննայի առաջարկությունը և հարցրի թե՛ արդյոք վաղուց են նրանք նշանված:

— Նրանք վաղուց սիրում էին միմյանց, — պատասխանեց քույր-Աննան ժպտալով. — այդ ես նկատեցի դեռ մի քանի տարի սրանից առաջ, երբ նրանք տակավին ուսանում էին: Այդ սերն, իհարկե, արտահայտվում էր լոկ քնքուշ, մանկական բարեկամությամբ: Եվ որովհետև երկուսն էլ չափից դուրս ուշիմ երեխաներ էին, ուստի իմ առանձին հոգածության առարկան դարձրի նրանց,

նպատակ ունենալով, ինչպես առաջներն էլ ասացի, պատրաստել նրանցից իմ գործը շարունակող հաջորդներ:

«Պետք է հիշեմ նաև, որ Մանիշակը այն երիտասարդ գյուղացու աղջիկն է, որ առաջին անգամ ինձ, իբրև «միանձնուհի» այս գյուղը բերավ: Նա ամուսնացավ իմ գալուց մի քանի տարի հետո և սա նրա առաջին զավակն է: Իսկ Պետրոսը որդի է մի այնպիսի մարդու, որ շարունակ իմ ձեռնարկություններին արգելք էր լինում: Սակայն ես նրա տան միջից պատրաստեցի ինձ համար հավատարիմ օգնական:

Նշանակված օրը երիտասարդ զույգի պսակը կատարվեց: Եկեղեցում ներկա էին քույր-Աննայի հետ միասին և յուր դպրոցի աշակերտներն ու աշակերտուհիները, որոնց առանձին խնամքով

հյուրասիրեց Պետրոսի հայրը յուր գեղեցիկ պարտիզում: Քույր-Աննան, պսակված զույգը և ես այդ փոքրիկ հյուրերի հետ էինք, իսկ գյուղացի հրավիրյալները ուրախանում էին մեզանից հեռու գտնվող մի ուրիշ այգում, իրենց գլուխ ունենալով տեր-Հովսեփին: Այսպես էր կարգադրել ինքը, քույր-Աննան, որպեսզի յուր սանիկները հանդիսատես չլինեին մեծերի ազատ զվարճությանը: Այս տոնախմբությունների հետ միասին օգոստոսն էլ վերջացավ: Քույր-Աննայի գուշակության համաձայն ես բոլորովին կազդուրվել էի: Պետք էր այժմ վերադառնալ քաղաք, ուսկից ամբողջ երեք ամիս բացակա էի: Այս վերադարձն, իհարկե, ծանր չէր ինձ համար, բացի անձնական գործով զբաղվելու անհրաժեշտությունը, վաղուց էր ինչ հեռու էի մորիցս ու քույրերիցս, բարեկամ ու ծանոթ չէի տեսել, շատ մի նորություններից զուրկ էի և որքան էլ դեպի քաղաքի կյանքն անհամակիր, այսուամենայնիվ, այժմ փափագում էի վերադառնալ:

Բայց իմ գյուղացի բարեկամների, մանավանդ քույր-Աննայի համար, զգալի էր իմ հեռանալը:

Վերջինս, մինչև անգամ, ցավում էր, որ սովորել է իմ ընկերակցության:

— Գոնե չգտնեի ձեր մեջ իմ գաղափարների ու համոզմանց համակիր մեկը, այն ժամանակ ավելի հեշտ կլինեի մոռանալ ձեզ, — ասում էր նա պարզությամբ. — Բայց բախտի բերմունքով դուք էլ նույն դավանությունն ունիք մեր ճակատագրի մասին ինչ որ ես, այդ պատճառով ձեր բաժանումը իբր իմ մխիթարության զրկանք եմ նկատում: Քույր-Աննայի խոստովանությունն անկեղծ էր, սակայն ես պիտի խոնարհեի հարկի առաջ: Սեպտեմբերի 2-ին, կյուրակե առավոտ գնացի նրան իմ հրաժեշտի ողջույնը տալու:

— Ես հեռանում եմ այստեղից, բայց տանում եմ ինձ հետ ամենաթանկագին հիշատակներ՝ ձեր բարեկամության ու գործերի, — ասացի նրան: — Եթե բախտը հաջողե՛լ էս կրկին կվերադառնամ այստեղ՝ վայելելու համար բնության և ձեր ձեռքով այս գյուղում պատրաստված բարիքները, որոնք մեծագնի էին ինձ, մանավանդ, ձեր անզուգական բարեկամությամբ համեմված լինելուն համար: Իսկ եթե անկարող լինիմ այդ փափագին հասնել, այն ժամանակ կմխիթարվիմ գեթ այն քաղցր մտածությամբ թե՛ մի անգամ, գոնե, վայելեցի ես այդ բոլորը:

— Բարի ճանապարհ, — ասաց քույր-Աննան, — աշխատեցեք ձեր խոստումը կատարել, իսկ եթե չկարողանաք, գոնե մի մոռանաք մեզ: Աշխատեցեք երբեմն-երբեմն նամակ գրել ինձ և տեղեկություն տալ այն ամենի մասին, ինչ որ գիտեք թե՛ պիտի հետաքրքրե ինձ և ինչ որ լրագրում անկարող եմ կարդալ: Ի վերջո կատարեցեք իմ մի խնդիրը՝ ոչ մի տեղ և ոչ ոքի մոտ մի խոսեք իմ մասին և մի հիշեք իմ գործերից ոչինչ:

— Ինչո՞ւ, — զարմացմամբ հարցրի ես. — չէ որ բարի գործերը արժանի են ամեն տեղ գովությամբ հռչակվելու, և դա ավելի օգուտ, քան չարիք կարող է բերել գործին:

— Ոչ, ես չեմ կամենում, որ իմ գոյությունը հայտնի լինի աշխարհին. անհայտության մեջ ապրել, անհայտության մեջ մեռնել, այդ է իմ ցանկությունը: Եվ դրա համար ես ունիմ հարգելի պատճառներ:

— Արդյոք չէիք կարող խելամուտ անել ինձ այդ պատճառներից մեկին, — հարցրի ես ժպտալով:

— Մի բան միայն կարող եմ ասել: Ով որ գործում է և դրա համար էլ փող փչել տալիս հրապարակում, նա հրավիրում է մարդկանց՝ գալ և քանդել յուր գործը: Թողեք որ ես ցորենի մի հատ լինիմ, այս երկրի մեջ մեռած... իսկ երբ այդ ցորենը կվերընձյուղե, երբ նրա հասկերը կլցվին և մարդիկ պտուղը կվայելեն, այն ժամանակ թող հիշեն նաև մեռած ցորենը, որ կյանք տվավ հասկերին և որին այլևս հափշտակիչ թռչունները չեն կարող փորել և հողից հանել... Իսկ առայժմ կամենում եմ անձանոթ մնալ աշխարհին, քանի դեռ նրա օգտի համար եմ վաստակում: Այո, չեմ կամենում փառավորվիլ մարդկանցից՝ մի բարի և օգտավետ գործ քանդելու գնով: Ահա ինչ որ կարող եմ ասել ձեզ...

«Որքա՛ն սեր դեպի հասարակաց բարին և որքան համեստություն, — մտածեցի ես, — եթե այս հոգվով վառված մի քանի տասնյակ գործիչներ ունենայինք, լեռներ կշարժեինք, գետերի ընթացքը կկասեցնեինք... բայց ուր են այդ գործիչները»:

Ես խոստացա քույր-Աննային ճշտությամբ կատարել յուր պատվերը և ջերմությամբ համբուրելով նրա սուրբ ձեռքը՝ հեռացա:

Տեր-հայրը, յուր որդիները և Պետրոս վարժապետը, որոնք ձի հեծած սպասում էին ինձ գյուղի ծայրում, ճանապարհ ձգեցին ինձ բավական հեռու:

Այնուհետև իջա դեպի Ուզուն-Դարայի կիրճերը, իմ նախկին առաջնորդ Պետոյի հետ: Այս անգամ մեր ճանապարհորդությունն անցավ առանց պատահարների: Երկու, օրից հետո ես արդեն քաղաքումն էի:

1887, հունիս 5, Թիֆլիս:

Հայրենի քաղաքիցս հեռանալուց հետո, այսօր առաջին անգամն եմ ձեռք առնում իմ հիշատակարանը, որ ծածկված մնացել էր իմ պահարանի մի անկյունում: Ես նորից կարդացի այն և անցյալի քաղցր հիշատակները հուզեցին հոգիս: Այդ հուզմունքը, սակայն, ուրախություն չէր այլ անդարձ կորուստի կսկիծ և հառաչանք...

Ուղիղ երեք տարի է անցել այն երջանիկ օրից, երբ ես Ն. գյուղում քույր-Աննային ծանոթացա, սակայն այդքան ժամանակի ընթացքում ես դեռ իմ հիշատակարանում նրա անձին վերաբերյալ պատմությունը չավարտեցի: Տխուր ժամանակը և տխրագույն դեպքերը վաղուց իմ գրիչը դատապարտել էին անգործության, և լռությունն ինձ համար դարձել էր հաճելի հիվանդություն: Բայց հիվանդությունն, ինչպիսին էլ որ լինի, անբնական կացություն է և վնասակար, մանավանդ, հոգվո առողջության, հետևապես, պետք է ազատվել նրանից, եթե կամենում ենք դեռ ապրել, մտածեցի ես և նորեն ձեռք առի գրիչս: Ինձ մնում էր ավելացնել իմ հիշատակարանում դարձյալ մի քանի երես և դրանով իմ «խորհրդավոր միանձնուհու» պատմությունը կվերջանար: Այդ էլ ահա անում եմ այժմ, մտածելով թե իրավունք չունիմ անհայտության մեջ թողնելու հիշատակն այն աննման կույսի, որին յուր առանձնության մեջ ճանաչեցի, որի արդյունավոր գործունեությունը տեսա, որի անգուգական առաքինությամբ հիացա: Եթե հարյուր ընթերցողից գեթ մեկը ոգևորվի իմ «միանձնուհու» ուխտով, այդ ոգևորությունն իսկ ապարդյուն չի անցնիլ, նա բարիք կարտադրե, իսկ բարվույն ամեն տեղ կդիմավորեն գրկաբաց:

Ն. գյուղից վերադառնալով, ես աշունն ու ձմեռը անցուցի մեր քաղաքում, իսկ 85 թվականի սկզբում արդեն Թիֆլիսումն էի անձնական գործով: Մինչև այստեղ գալս մի քանի նամակներ ունեի գրած քույր-Աննային և պատասխաններն ստացած իսկ այստեղ հասնելուց հետո, ավելի ևս հաճախ սկսա գրել, որովհետև 85 թվականի առաջին քառորդը մեզ համար հարուստ ու հետաքրքրական էր ընդհանրական մի խնդրի, այն է կաթողիկոսական ընտրության վերաբերյալ տեղեկություններով:

Եվ որովհետև հայ խմբագրություններից մեկին մոտ էի ես, ուստի կարողանում էի իմ բարեկամուհուն, գրեթե ամեն շաբաթ, նորանոր տեղեկությունները հաղորդել՝ նկատմամբ այն անձի և նրա հետ կապված խնդրի, որոնք այնքան մոտ ու սիրելի էին յուր սրտին և որոնց մասին մենք գյուղում խոսում էինք շարունակ: Իմ տված տեղեկությունները, նայելով ժամանակի կուսակցական ոգուն և հանգամանքների փոփոխության, լինում էին երբեմն ուրախ և երբեմն տխուր: Սակայն մոտալուտ երջանկության մի հույս թևապարում էր մեր շուրջը: Ամենքս սպասում էինք թե՛ որոշյալ օրն ու ժամին պիտի ավետենք միմյանց «արժանիքի հաղթանակն» ընտրությամբ մի անձի, որի մասին գովությամբ էին խոսում հայոց թերթերը և որի վրա մեծ հույս ու վստահություն ունեին հայրենասերները: Սպասում էին նրան տեսնել բարձրացած վեհապետական այն գահին, դեպի որն ամեն հայ հառում էր յուր աչքը սիրով ու հավատով, ջերմեռանդ անկնածությամբ և որն յուր մեջ ամփոփում է հազար վեց հարյուր տարվա հայության հոգևոր կյանքի իդձերն ու մխիթարությունները: Այդ սրբազան պաշտոնին արժանի համարված անձը, քույր-Աննայի անգուգական ուսուցիչը, հայրենավառ Գարեգինն էր, որը վաղուց արդեն եպիսկոպոսական աստիճանին հասած, այժմ արդեն նշանավոր մի թեմի սիրված ու մեծարված առաջնորդն էր:

Եվ ահա, արդարև, նույն տարվա ապրիլին ես կարողացա մի ավետավոր հեռագիր հասցնել քույր-Աննային, որին մի շաբաթից հետո իբր պատասխան հետևյալ նամակը ստացա.

«Ազնիվ բարեկամ.

«Ձեր հեռագիրը լցրեց իմ սիրտը անսահման բերկրությամբ: Չգիտեմ ինչպես արտահայտեմ իմ շնորհակալությունը Ձեզ, որ այդքան սիրելիբար փութացել եք ինձ ուրախացնելու: Չնայելով Ձեր հավաստիացումներին, ես, այնուամենայնիվ, հույս չէի տածում թե մեր ժամանակակիցները կկարողանան այդպես իմաստաբար գնահատել արժանիքը: Օրհնյալ լինին նրանք, որոնք սուրբ գործի համար միացան ի մի սիրտ և «գործեցին զբարին»: Եթե ճշմարտությունը հաղաթանակում է, ուրեմն նրա զինվորները կարող են պարծենալ և քաջալերվիլ: Եվ սա կրկնակի բարիք է մեզ համար: Այսօրվանից արդեն գործելու նոր եռանդ է վառվում իմ մեջ: Ես, որ մինչև այսօր «ի փոքրուն եղէ հաւատարիմ», այսուհետև պետք է աշխատությունս կրկնապատկեմ, ըստ որում կա մեկը, որ կարող է մեզ «ի վերայ բազմաց կացուցանել»:

Ողջ եղեք, ազնիվ բարեկամ և ընդունեցեք իմ սրտագին շնորհակալության և անկեղծ հարգանաց հավաստիքը. որով պիտի մնամ միշտ

Ձեր խոնարհ աղախին՝ Աննա Ե...յան»:

Այդ օրից հետո անցան երկու հուսալիր ամիսներ: Ես կրկին նամակներ գրեցի քույր-Աննային, միշտ ուրախ նորություններ հաղորդելով նրան և նույնպիսի պատասխաններ էլ ստացա: Բայց որովհետև հուլիս և օգոստոս ամիսներում Թիֆլիսից ելած՝ ճանապարհորդում էի, ուստի քույր-Աննային նոր

նամակ գրելու առիթ չունեցա: Երբ ամռան վերջը վերդարձա քաղաք, այստեղ իմացա, որ ամեն բան արդեն փոխվել էր, և մեր հույսերն ու իդձերը իսպառ ոչնչացել... Այդ նորությունը շատ ծանր ազդեցություն արավ վրաս: Բոլոր առօրյա խնդիրների հետ միասին ես մոռացա նաև քույր-Աննային: Բայց նա ինքը ինձ չէր մոռացել: Անգետ լինելով իմ բացակայության, նա կարծել էր թե՛ ես նամակ չեմ գրում իրեն այն պատճառով, որ վաղուց տեղյակ լինելով տխուր նորությանը, սիրտ չեմ անում այդ բանը իրեն հայտնելու: Ուստի ինքը շտապել էր հետևյալ համառոտ նամակն ինձ դրկելու.

«Ազնիվ բարեկամ.

Այստեղ հասավ սույն թվականի օգոստոսի 22-ին լույս տեսած «Մեղուն»: Ձեր լռության պատճառը հասկացա, իրավունք ունիք. լռեցեք...

Ձեր վշտահար քույր-Աննա»:

Եվ ես արդարև լռեցի: Ինչ գրեի այնուհետև նրան, ինչ նյութի վրա խոսեի, չէ որ մեր մտերմության շունչ ու հոգի տվող խնդիրը մեռել էր և նրան այլևս հարություն տալու, հույս չկար...

Անցան մի քանի ամիսներ: Ես ոչ մի նամակ չգրեցի իմ բարեկամուհուն, ոչ էլ նրանից ստացա: Սակայն մի օր ինքս ինձ մտածեցի, «Մա արդեն անքաղաքավարություն է: Գոնե մի քանի տող գրությամբ նրա առողջությունից հարցնեմ: Խեղճ կինը առանց այն էլ ճնշված է վշտերի տակ, հետևապես և կարոտ վշտակցության...»:

Եվ իսկույն էլ նստելով ու թե մի քանի տող, այլ շատ երկար մի նամակ գրեցի քույր-Աննային՝ աշխատելով կարելվույն չափ սփռվել նրա սիրտը կամ գեթ ապագայի հուսով պարարել: Որքան մեծ եղավ իմ զարմանքն ու ապշությունը, երբ երկու շաբաթից հետո, փակված ետ ստացա իմ նամակը, Պետրոս վարժապետի հետևյալ գրության հետ.

«Հարգելի բարեկամ.

Վշտահար սրտով վերադարձնում եմ Ձեզ այն նամակը. որ ուղղել էիք իմ սիրեցյալ ուսուցչուհուն:

Նա այլևս չկա... Մի ամիս առաջ փոխվեցավ երկինք, թողնելով մեզ անմխիթար սուգի մեջ...

Ներեցեք, որ ինձ է վիճակվել այս տխուր նորությունը Ձեզ հաղորդելու:

Հաճեցեք ընդունել խորին հարգանքը

Ձեր նվաստ ծառա Պետրոս Կովիկյանի»:

Ահա մի անսպաս հարված էր: Միթե քույր-Աննան մեռավ, միթե արդարև այն մեծ, այն հոյակապ կինը այլևս չէ ապրում աշխարհում... Ես չէի կարողանում հավատալ, չէի կամենում, որ դա ճշմարտություն լիներ... Բայց ավաղ, վարժապետի գուժաբեր նամակը կատակի համար չէր գրված: Սակայն ինչն արդյոք սպանեց նրան, մի դաժան հիվանդություն, թե՛ յուր հայտնի վիշտը, չգիտեի, վարդապետն այդ մասին ոչինչ չէր հիշել:

Այսպես թե այնպես այդ գույժն իմ սրտին կսկիծ պատճառեց: Քույր-Աննայի մեռնելով մենք կորցնում էինք մինն այն գերազանց ուժերից, որոնք ծնունդ էին առել վաթսուևական թվականներին, որոնց սակայն արժանավոր հետևողներ չգտնվեցին մինչև այսօր: Մա մի անդառնալի կորուստ էր...

86 թվականի ամառը ես վերադարձա իմ հայրենի քաղաքը և ամենից առաջ սրբազան պարտք համարեցի գնալ քույր-Աննայի գերեզմանին այցելության:

Գրեթե միևնույն ամսվա մեջ ես անցա իմ ծանոթ ճանապարհներով. տեսա նույն ժամանակվա հարուստ դաշտերը գեղեցիկ ձորերը, կանաչ բլուրները, գեղազարդ հովիտները, նույն կուսական անտառները, նույն ահավոր լեռներն ու կիրճերը: Բոլորն էլ նույնչափ գեղեցիկ, նույնչափ հրաշալի, որչափ և այն ժամանակ: Սակայն այդ անփոփոխ գեղեցկությունների մեջ ես, կարծես, մի տխրություն էի նշմարում. բնությունն այլևս չէր ժպտում, արևի շողերը չէին ծիծաղում, զեփյուռի շունչը էլ չէր գուրգուրում... Ես չէի ականջում ոչ սարյակի երգին, ոչ ջրվեժի շառաչին, սրտիս հետ խոսում էր միայն թփերի մեջ սահող առվակի մրմունջը, որ կարծես յուր տխուր, մեղմաձիգ շշուկով՝ անհայտության մեջ մեռած հերոսուհուն էր ողբում...

Երեկոյան դեմ էր, երբ Ն. գյուղը հասա: Իմ ծանոթներից առաջին անգամ, տեր-Հովսեփին պատահեցի: Նա դիմեց դեպի ինձ. մենք գրկվելով համբուրվեցանք, իբր հայր և որդի: Որքա՛ն էր նա փոխվել երկու տարվա մեջ: Նրա մազերն այժմ ավելի սպիտակ, իսկ դեմքը գունատ էր:

— Էլ ուր ես եկել մեզ մոտ, որդի, — սրտաշարժ ձայնով խոսեց քահանան, — մեր գյուղը որբացավ, անշքացավ, նրա զարդն ու գեղեցկությունը կորավ. Քույր\_\_\_\_\_ -Աննան էլ չկա, որին ես եկել տեսնելու...

— Եվ այս խոսքերի հետ նրա աչքերը լցվեցան: Ես էլ հուզվեցա և արտասվեցի: Եվ ինչպե՛ս

չարտասովելի: Ես մտել էի այն գյուղը, որի բնությունն ու մարդիկը սիրելի էին դարձել ինձ քույր-Աննայի շնորհիվ, իսկ նա այժմ չկար, գյուղը կիսով չափ դատարկ, անշքացած և տխրամած էր երևում ինձ:

Հասանք տուն: Մեզ դիմավորեցին քահանայի որդիքը. կինը և հարսները, վերջը եկավ և Պետրոս վարժապետը յուր ամուսնու Մանիշակի հետ: Նրանք բոլորն էլ տխուր, բոլորն էլ կարծես ընկճված էին նույն թախծության ներքո: Ամենքին էլ ողջունեցի ինչպես իմ սիրելի բարեկամներին, հետո սկսանք խոսել քույր-Աննայի մահվան վրա: Խնդրեցի տերհորը պատմել, թե ինչ հիվանդությամբ արդյոք մեռավ խեղճ կինը և միթե չէին կարող բժշկական օգնություն հասցնել:

— Երևի աստծուց այդպես էր վիճակված, որդի, — սկսավ խոսել տեր-հայրը. — նրա հիվանդության պատճառը ոչ ոք չիմացավ: Դեռ անցյալ տարի այս ժամանակ ինչպես նա առողջ էր, ուրախ, զվարթ և հանկարծ օգոստոսի վերջերում փոխվեցավ: Երկու ամիս շարունակ անկողնին ծառայեց: Շատ անգամ կամեցա գնալ քաղաք բժիշկ հրավիրելու, բայց ամեն անգամ էլ նա արգելեց: — Ինչու համար ես բերում բժիշկը, տեր-հայր, — ասում էր նա ինձ. — կյանքն արդեն ինձ համար դարձել է ծանր բեռ, ով որ այն վերցնե, շնորհապարտ կլինեմ նրան... Ինչու համար էր այդպես ասում, չէի կարողանում հասկանալ, որովհետև այդպիսի հուսահատական խոսքեր ես նրանից առաջները բնավ չէի լսել: Եվ սակայն պատճառը չէի համարձակվում հարցնել: Այդպես նա հալվեց, մաշվեց և ճրագի պես հանգավ:

Պետրոս վարժապետն ուրիշ մանրամասնություններ հաղորդեց:

— Անցյալ օգոստոսի 30-ին, ուրբաթ օր, ես լավ հիշում եմ, — ասաց նա, — երեկոյան դեմ քույր-Աննան, Մանիշակը և ես նստած էինք ուսումնարանի բակում և խոսում էինք: Վանքի ծառան բերավ լրագիրները: Քույր-Աննան առավ և սկսավ թերթել: Դրանցից մինի հեռագիրները կարդալիս նա հանկարծ բացականչեց. «Օ՛հ, ամեն բան կորավ...» և ձեռքը դեպի ճակատը տանելով՝ բռնեց գլուխը և այդպես, գրեթե քառորդ ժամ, մնաց անշարժ, ընդարմացած:

— Ինչ է պատահել, քույրիկս, ինչու տխրեցիր, — հարցրեց Մանիշակը:

— Ինչ, որ պատահել է, սիրելիս, նրա ցավը դու շատ ուշ պիտի զգաս, — ասաց նա մեղմով և լռեց: Մենք ուրիշ հարցեր չարհնք, վասնզի տեսանք, որ նա չէ ուզում խոսել: Եվ այդ օրվանից էլ կարծես դժբախտ հիվանդությունը մտավ նրա մեջ: Վասնզի մյուս առավոտ դասատուն չեկավ և ինձ հանձնեց պարապել յուր դասը, իսկ հետևյալ օրը՝ կյուրակի պատարագին չեկավ և դպրապետությունը ես արի: Երկուշաբթի և երեքշաբթի դարձյալ դասերից բացակա էր: Այդ բոլոր ժամանակ նա կամ փակված էր լինում յուր սենյակում, կամ տխուր ու մտախոհ շրջում էր անտառում: Մի շաբաթից հետո բոլորովին թողեց յուր պարապմունքը և ամեն առավոտ կանչում էր ինձ ու Մանիշակին և պատվիրում, թե ինչպես պիտի մենք յուր դասերը պարապենք:

— Հիվանդ եմ, սիրելիներս, — ասաց նա մի օր, — էլ գործելու սիրտ չունիմ. աշխատեցեք, որ իմ բացակայությունը զգալի չլինի երեխաներին, պարապեցեք նրանց հետ սիրով, եռանդով, դուք արդեն պատրաստված եք դրա համար: Գուցե մի օր ես չլինիմ, ուրեմն այժմյանից գործը կառավարելու հոգսը պիտի առնեք ձեզ վրա:

— Աստված չանե, քույրիկ, ինչու այդպես եք ասում, դուք մեզ անիծում եք, — վշտացած նկատեցինք մենք:

— Չէ, սիրելիներս, մի՛ նեղանաք, իմ սիրտը վկայում է, որ վախճանս հեռու չէ, — ասաց նա հառաչելով, — տխրելու էլ ոչինչ չունիք. ոչ ոք աշխարհում հավիտյան չէ ապրում: Մակայն ես ուրախ եմ, որ ինձանից հետո պիտի թողնեմ ձեզ. վստահ եմ, որ դուք հավատարիմ կմնաք ինձ: «Այնուհետև նա դարձյալ մի-մի անգամ մտնում էր դասատուն, առաջվա նման քաղցրությամբ խոսում էր աշակերտների ու աշակերտուհիների հետ, ասում էր նրանց, որ այնուհետև միայն մենք



պիտի պարապենք իրենց հետ և պատվիրում էր հնագանդ լինել մեզ:

«Մի քանի օրից հետո քույրիկը կանչեց մեզ. այլև անցյալ տարում ավարտողներից իրենց ընդունակությամբ հայտնի մի աշակերտի ու աշակերտուհու. բոլորիս հետ միասին կազմեց դասերի նոր ցուցակ և գլխավոր առարկաները մեզ, իսկ երկրորդականները վերջիններին հանձնելով, պատվիրեց, որ այդ օրից արդեն ուսումնարանի բոլոր հոգսը առնենք մեզ վրա: Այդ միևնույն օրը նա զանգատվում էր գլխացավից, իսկ երեկոյան դողացրեց, ապա սաստիկ ջերմ ուներ և ամբողջ գիշերը, ինչպես Մանիշակն էր ասում, այրվել էր տաքությունից:

«Հետևյալ առավոտ քույրիկի դրությունն ավելի վատթարացավ: Թիկունքում, կրծքում ու կողերում ցավեր էր զգում, շնչառությունը ծանրացել էր, իսկ երեկոյան, ջերմի սաստկությունից մինչև անգամ

զառանցում էր: Այդ ամենի

վրա ավելացավ նաև հազը, որ գնալով սաստկանում և քունն ու հանգստությունը խանգարում էր: Չնայելով որ տեր-հոր և տանուտերի խնդիրը մերժեց, թույլ չտալով բժիշկ հրավիրել քաղաքից, այսուամենայնիվ մորս աղաչանքը լսեց և թույլ տվավ, որ գյուղի վարսավիրն արյուն առնե թիկունքից: Վերջինի ասելով քույրիկը թոքերի բորբոքումն ուներ և այդ միջոցը կարող էր նրան օգնել: Արդարև արյուն առնելուց հետո կրծքի ու թիկունքի ցավերը հանդարտվեցան և շնչառությունը թեթևացավ: Այնուհետև գործադրեցինք մի քանի տնային միջոցներ էլ գլխացավի ու ջերմի դեմ, որով մի քանի օրից հիվանդությունը մեղմացավ: Բայց ինքը, կարծես, չէր կամենում առողջանալ և խույս էր տալիս օգտավետ միջոցների գործադրությունից Նույնիսկ բավական չափով կերակուր չէր ընդունում, որից հետզհետե մաշվում ու թուլանում էր: Այդ էր պատճառը. որ չնայելով մեր անընդհատ հոգացության, նա, այսուամենայնիվ, անկողնից չելավ և դրսում չերևաց: Գրեթե մեզանից գատ էլ ուրիշ ոչ ոքի չէր ուզում տեսնել, խոսում էր շատ քիչ և այն՝ միայն Մանիշակի հետ, իսկ երբեմն անկողնում գրում էր ինչ որ բան: Ախորժակը հետզհետե փակվում էր և վերջին օրերում, համարյա, ոչինչ չճաշակեց, իսկ բժշկական օգնությունը, ինչպես տեր-հայրն էլ ասաց, նա բացեիբաց մերժել էր:

«Հոկտեմբերի վերջին, — նորեն սկսավ խոսել տեր-հայրը, — նա կանչեց յուր մոտ ինձ, տանուտերին և գյուղի մի քանի նշանավոր մարդկանց և ասաց. «Զգում եմ, որ վախճանս մոտեցել է. ես հեռանում եմ ձեզանից, բայց իմ սիրած գործերը, որոնց արդեն կտակած եմ և իմ մնացորդ կարողությունը, թողնում եմ ձեզ: Իմ ուսումնարանը, իմ սիրելի աշակերտները մնում են ձեր հուսով: Պահեցեք նրանց, պաշտպանեցեք նրանց, խնդրում եմ: Իմ վարժապետներն ու վարժուհիները դեռ երիտասարդ են և կյանքի մեջ անփորձ, օգնեցեք նրանց, թե ու թիկունք եղեք նրանց գործին և այդ երջանկություն կրերե՞ ձեզ...»: Մենք խոստացանք ու երդվեցինք հավատարիմ մնալ նրա պատվիրանին: Նա սրտաշարժ խոսքերով օրհնեց մեզ և մենք արտասովորով դուրս գնացինք նրա մոտից:

— Նրա անկողնի մոտ հսկում էի ես, — խոսել սկսավ այժմ Մանիշակը. — մեռնելուց մի օր առաջ խնդրեց ինձ օգնել իրեն նստել անկողնում և կանչել յուր մոտ Պետրոսին և նորընտիր վարժապետին ու վարժուհուն: — «Իմ սիրելի որդիներս, — ասաց նա մեզ. — ես հեռանում եմ ձեզանից, բայց իմ հոգին թողնում եմ ձեզ հետ, հավատարիմ մնացեք նրան: Գնացեք շարունակ այն շավղով, որը ես ձեզ համար հարթեցի: Ձեզ եմ հանձնում այն գործը, որին նվիրել եմ իմ երիտասարդությունը, իմ հասուն տարիքը, իմ ուրախությունները, իմ ամբողջ կյանքը... սիրեցեք այդ գործը ձեր անձից ավելի, զոհեցեք նրան ձեր հանգստությունը, ձեր զվարճությունները, եթե կարող եք և եթե կամենում եք ինձ ժառանգորդ կոչվիլ: Միրեցեք միմյանց և միասնական ուժով առաջ տարեք ձեր մոր և վարժուհու սիրած ու պաշտած գործը: Իմ հոգին կիրճվի երկնքում և ոսկերքս գերեզմանի մեջ, եթե դուք արիությամբ ծառայեք ձեր պաշտոնին և հավատարիմ մնաք իմ

դավանության, որ է՝ «սիրել ընկերը յուր անձից ավելի»: Խոստացեք ինձ որդու և աշակերտի ազնվագույն խոստումով, որ իմ պատվերները ճշտությամբ կկատարեք և ինչ որ ես ավանդ եմ տալիս ձեզ նույնը և դուք ավանդ կթողնեք ձեր որդիներին կամ հաջորդներին...»:

«Մենք չորսս միասին ծունկ չոքեցինք նրա առաջ և արտասովելով խոստացանք նրա պատվերները ճշտությամբ կատարել: Հետո նա պատվիրեց կանչել յուր մոտ բոլոր աշակերտներին և աշակերտուհիներին: Նա օրհնեց նրանց, խրատեց և պատվիրեց սիրով ու եռանդով սովորել և միշտ հնազանդ լինել ու սիրել մեզ:

Երեկոյան դեմ նա մինչև անգամ մի փոքր ուրախ էր և հենց այդ ժամանակ մի կարևոր հանձնարարություն արավ ինձ, իսկ գիշերը դարձյալ գանգատվում էր սրտի չափազանց անհանգստությունից: Առավոտյան վերջին ժամերը նա հոգեվարքի մեջ անցկացրեց: Տեր-հայրը, որ բոլոր ժամանակ Պետրոսի հետ միասին գտնվում էր մյուս սենյակում, եկավ և սուրբ հաղորդությունը տվավ նրան: Երբ արևի առաջին ճառագայթներն ընկան պատուհանի վրա, նա յուր արդար հոգին ավանդել էր արդեն...

Մանիշակն ավարտեց յուր խոսքը արտասովելով և մենք ամենքս զգացված հետևեցինք նրան:

Երբ տխուր գրույցն ավարտելով, ես առանձնացա ինձ համար պատրաստված սենյակը հանգստանալու, Մանիշակը, որ քիչ առաջ դուրս էր գնացել Պետրոսի հետ, նորեն վերադարձավ և մտնելով ինձ մոտ պարզեց դեպի ինձ մի ծրար և ասաց,

— Այն հանձնարարությունը, որ վերջին երեկոյան արավ ինձ քույր-Աննան, այս էր: Նա պատվիրեց ինձ՝ հանձնել ձեզ այս ծրարը, եթե երբևիցե գալու լինեիք մեր գյուղը՝ յուր գերեզմանին այցելելու: — Այս ասելով նա թողեց ծրարն իմ ձեռքում և դուրս գնաց:

Եվ այնքան արագ կատարեց նա այս, որ ես սկզբում կարծես չհասկացա թե ինչ էր ասում ինձ, որովհետև ուշադրությունս տակավին գրավված էր նորատի կնոջ անսպաս ներս գալովին: Բայց, երբ նա ծրարն իմ ձեռքում թողնելով հեռացավ, այն ժամանակ միայն խելաբերեցի և սկսա դիտել ինձ տրված ավանդն այնպիսի երկյուղած հետաքրքրությամբ, որով միայն ջերմեռանդ հավատավորը կարող էր դիտել հանկարծ ու անսպաս երևան եկած մի սրբի մասունքը... Ծրարի վրա իմ անվան կամ ազգանվան փոխարեն գրված էր միայն՝ «մեր բարեկամին»: Այսքանն արդեն բավական էր, որ իմ հիշողության մեջ նորեն կենդանանար քույր-Աննայի կյանքի ամբողջ պատմությունը կամ իմ առաջ նկարվեր նրա հոյակապ, սրբափայլ պատկերը: Եվ այդ էր արդյոք պատճառը, որ ինձ մի վայրկյան այնպես թվաց թե նա իրոք չէ մեռել, թե դեռ ապրում է և պիտի խոսի ինձ հետ... նրա ձեռքով գրած երկու բառերը այդպիսի մի հավատ ներշնչեցին ինձ առ վայրկյան: Միննույն ժամանակ, ես դանդաղում էի բանալ ծրարը: Ինձ այնպես էր թվում թե՛ այդ չպիտի անեմ միայնակ, առանց քահանայի, կամ քույր-Աննայի ձեռնասունների ներկայության: Ինչ կար արդյոք ծրարում, կտակ էր դա, թե մասնավոր հաղորդագրություն, չգիտեի և ոչ էլ կարող էի գուշակել. բայց գիտեի այն, որ այդ առաքինի կնոջ գործերը, նրա սիրտն ու հոգին մի մարդու չեն պատկանել, այլ ժողովրդրդին, ուրեմն և նորա թողած ավանդը հայտնի պիտի լինի շատերին: Այս մտքերն ինձ զբաղեցրին մի քանի վայրկյան: Բայց հետո հիշեցի որ Մանիշակը ծրարը հանձնեց ինձ առանձին և որոշակի ասաց. «Քույր-Աննան պատվիրեց հանձնել ձեզ այս ծրարը, եթե երբևիցե գալու լինեիք մեր գյուղն յուր գերեզմանին այցելելու», ուրեմն միայն ինձ էր տրված այդ շնորհը և ես իրավունք չունեի մասնակից անել նրան ուրիշներին: Այս մտածությամբ բացի ծրարը, որ պարունակում էր յուր մեջ ծայրեփծայր գրված մի քանի թերթիկներ, հետևյալ բովանդակությամբ.

«3 հոկտ. 1885

«Ազնիվ բարեկամ.

«Երկու շաբաթ առաջ ծանր հիվանդացա թոքերի բորբոքումով: Չգիտեմ ինչպե՞ս և ինչու անցավ

այն: Ինքս իսկապես չէի ուզում ապաքինվիլ... այժմ փոքր ինչ կազդուրված եմ, թեպետ տակավին

չեմ ելած անկողնից: Կարող է պատահել, որ երբեք էլ չեմ նեմ: Այդպիսի մի նախազգացում պաշարած է այժմ ինձ: Այդ իսկ պատճառով կամենում եմ օգտվել իմ կյանքի մնացորդից և գրել ձեզ մի քանի բան: Ձեզ իմ անցյալի պատմությանը ծանոթացնելուց հետո, ավելորդ չէ հաղորդել և պատմությունն իմ վերջին օրերի, որոնք թվում է, թե չի պիտի երկարեն... Ինչ էի ես ամիսներ առաջ և ինչ եմ այժմ, այդ պարզ տեսնում եմ. ուրեմն իրավունք ունիմ սպասելու վախճանիս... Կար ժամանակ, երբ չէի մտածում դրա համար, մեռնելու հարցով չէր զբաղվում հոգիս, որ տոգորված էր միայն գործելու տենչով: Իսկ այժմ... Աստված իմ, որքա՛ն շատ եմ փոխվել... էլ կյանքն ու գործը չեն գրավում ինձ. անհաջողությանց դեմ այնքա՛ն ուժգին մաքառող կամքս էլ չէ վառում իմ եռանդը, որ մոտ է մարելու... Ձեզ հայտնի հարվածից ես այնպես ընկճվեցա, ինչպես փոթորկից քարեբեր ծառը, որ արմատահան լինելով՝ դառնում է անընդունակ ապրելու և գործելու... Բայց ինչո՞ւ այս աստիճան: Երբեմն այս մասին մտածում եմ ժամերով և ապա գալիս տխուր հետևանքի. — ինձ համար հետզհետե պարզվում է մի հարց, որի մասին առաջ ես չեմ մտածել, կամ գոնե ինձ թվում է թե՛ չեմ մտածել: Այդ այն է, որ ես այժմ ինձ տեսնում եմ անգոր այլևս արգելքի դեմ մաքառելու և դրա պատճառը համարում եմ այն, որ իմ մեջ տակավին ապրում է կինը, նա, որին մեծ բանաստեղծը իրավամբ է անվանել թուլություն: Որքա՛ն է ուղիղ իմ հայացքը այս խնդրի վրա, չգիտեմ: Ես կպատմեմ ձեզ իմ կրածն ու զգացածը այս վերջին ամիսներում և դուք նրանից ձեր եզրակացությունն արեք: Բայց... ձեռքս հոգնեց, գլուխս պտտում է... խոսենք այս մասին վաղը: «4 հոկտ.

«Դեռ մի տարի սրանից առաջ որքան ինձ ուժեղ և անընկճելի էի համարում, որքա՛ն մեծ փափագ ունեի ապրելու, որովհետև ընտրածս ասպարեզի վրա տակավին կատարելու գործեր ունեի: Հիշում եմ, նույնիսկ ձեր հեռագրին տված իմ պատասխանում ասում էի թե «այժմ իմ մեջ վառվում է գործելու նոր եռանդ, վասնզի արժանիքն արդեն գնահատվել և ճշմարտությունը հաղթանակել է և թե ուրեմն սրա զինվորները կարող են պարծենալ և քաջալերվիլ: Այդ զինվորների շարքում, հարկավ, թվում էի և ինձ... Բայց ավաղ, չանցավ մի չնչին միջոց և ահա մենք զգացինք, թե որքան վաղաժամ էր մեր ուրախությունը, թե որքան գուրկ էինք մենք ոգևորվելու և նույնիսկ հուսալու իրավունքից... Այսպիսի դեպքում ի՞նչ է անում արդյոք ուրիշ երկրում կինը, այն տկար արարածը, որին ոգևորությունը թևեր է տալիս, իսկ հուսախաբությունը զրկում մինչև անգամ կանգուն մնալու կարողությունից... չգիտեմ: Ինձ համար միայն կարող եմ ասել թե՛ փորձության այս հարվածին դիմադրել չկարողացա, տխուր հայտնության առաջին վայրկյաններն իսկ բավական եղան ինձ ընկճելու և վիատեցնելու: Եվ դրա պատճառը, ինչպես երեկ էլ ասացի, համարում եմ այն, որ իմ մեջ տակավին ապրում է կինը. զգացմունքների և թուլության այն մարմնացումը որ կրում է մի սիրտ՝ բոլորովին աննման տղամարդու սրտին... Թեպետ իմ անցուցած սահմանափակ կյանքը իրավունք չի տալ ինձ դատել այլ դեպքում կենցաղագետի հավակնությամբ, այսուամենայնիվ, հիմնվելով այն ծանոթությունների վրա, որ այսքան տարիներ ունեցել եմ մարդկանց հետ, և, մանավանդ, այն ծանր փորձերի որոնց իբրև կին ենթարկվել եմ անձամբ, կարող եմ պնդել թե տղամարդը անհատական կյանքով ապրելու համար օժտված է ավելի զորեղ կամքով ու կորովով, քան կինը. հետևապես վերջինս իզուր է աշխատում մրցել նրա հետ այդ ասպարեզում: Տղամարդը, այո, կարող է ապրել միայնակ և ինքն յուր մեջ կենտրոնացած՝ նվիրվել յուր սրտի մեծադրած շահերին (լինին դրանք անձնական, հասարակական, թե գաղափարական) և այդ նվիրման մեջ յուր սրտի հանգիստն ու գոհությունը գտնե, հանդիպեց նա մի գործում անհաջողության, կփորձե երկրորդը, երրորդը և սակայն հուսահատությունը չի ընկճիլ նրան: Մինչդեռ կինն այդպես չէ. նա ծնվել է ոչ թե ուժերի դեմ մաքառելու, այլ նրանց պաշտպանությունը վայելելու, ոչ թե կռվելու կամ հալածվելու, այլ

սիրելու և սիրվելու համար, ուստի նա լավ է ապրում և լավապես գործում միայն այն ժամանակ, երբ սերն ու զգվանքը սնունդ են տալիս նրա սրտին և խրախուսում նրա ճիգն ու աշխատանքը: Այդպիսի ժամանակ կինը ընդունակ է նույնիսկ մոռանալ իրեն և նվիրվել բոլորովին սիրած անձի էությանը, նրա մտքերին ու գաղափարներին, նրա մեծադրած շահերին, նրա անվանն ու փառքին... Կինը հաճախ ավելի սիրով դառնում է մի հյուլե կամ ամենաշատը՝ լուսո մի շառավիղ՝ այդ փառքի պատկերը լուսավորելու համար, քան թե փայփայում է յուր սեփականը՝ իբրև ուրույն գործող երևալու համար: Եվ այդ անում է ոչ այն պատճառով, որ ինքն ավելի է ընդունակ անձնվիրության, քան տղամարդը, այլ այն որ ավելի է ապրում զգացմունքներով, այսինքն սրտով: Եվ որովհետև կնոջ սիրտը միայնակ մնացած ժամանակ չի ջերմանում ինքն իրեն, ըստ որում նա ստեղծված է մի ուրիշ էակի շնչով ջերմանալու, նրա ազդեցությամբ բաբախելու, նրա զգվանքով գորանալու և, ի վերջո, նրա էության մեջ լուծվելու և այդ լուծման մեջ յուր երանությունը գտնելու համար, այդ պատճառով նա, ձգտելով դեպի յուր ընտրած էակը, ցանկանում է տեսնել նրան կարող ու գորավոր, որպեսզի ինքը՝ նրանից սիրված ժամանակ, սիրվի գերազանցորեն, բուռն և ուժգին... Եվ հենց այդ պատճառով էլ նա սիրով տալիս է այդ էակին ամենը, ինչ որ ունի մեծագին, որպեսզի դրանով ավելի գորանա այն աղբյուրը, որ կյանք պիտի տա իրեն: Այս իսկ է պատճառը, որ կինն ավելի է ուրախանում սիրած անձին հասած մի հաջողությամբ, կամ տխրում նրա կրած մի կորուստով, քան եթե դրանք հասած

լինեին իրեն: Վասնզի հավատում է թե՛ ինքը կարող է մնալ միշտ կանգուն և գորավոր, քանի գորավոր է սիրո առարկան, բայց կրնկճվի, կոչնչանա, երբ այս վերջինը զրկվի յուր ուժից... Եթե տեսնեք մի կին, որ ապրում ու գործում է միայնության մեջ, օ՛, այդտեղ էլ պտրեցեք այն աներևույթ ոգին, որ նրան ընկերանում, շունչ ու կյանք է տալիս, հուր ու կորով է ներշնչում... այո, կնոջ սիրտը մենակ ապրել չէ կարող, միայնության մեջ նա կսառչի, կընդարմանա և այդ է պատճառը, որ նա սրտագին ձգտում է դեպի ջերմացնող ճառագայթները: Թող նրանց աղբյուրը գտնվի թեկուզ հեռվում, անհունության մեջ, բավական է, որ նրանց լույսն ու ջերմությունը հասնում են իրեն, նա գոհ է լինում և այդքանով... Բայց երբ այդ լույսը մարում, երբ ճառագայթների աղբյուրը ցամաքում է, օ՛, այն ժամանակ մի պտրեք կնոջը կենդանիների մեջ... ա՛խ, որքան թույլ եմ... աչքերս խառնվում են, չեմ կարող շարունակել...

«5 հոկտ.

«Իզուր չէ ասում լատինական առածը «առողջ հոգին առողջ մարմնի մեջ»: Ինձ թվում է թե հուսահատությունն այսքան չէր ընկճիլ հոգիս, եթե ես չհիվանդանայի, բայց այդ պատահեց անսպաս: Ձեր հեռագիրը ստանալուց հետո ինձ այնպես լավ էի զգում, այնպես երջանիկ, որ կարծես նորեն երիտասարդացել էի: Ես, որ իմ գործունեության երկար շրջանում ոչ ցնորել էի և ոչ երազել, այժմ այդ անում էի ինչպես կյանքի գարունը նոր ողջունող մի պատանեկուհի: Գրեթե օրերով մտորում էի այն մասին թե՛ ահա, ուր որ է «ընտրյալը» կգա, կողջունե կարոտով սիրած հայրենիքը, կբազմի հինավուրց աթոռի վրա և շուրջը խմբելով արժանյաց տեր անձինք, կսկսե վերաշինել խաթարյալ տունը, կմաքրե նրան փտությունից ու փոշուց և միջից հանելով հիվանդն ու օտարամուտը, տեղը կհաստատե առողջն ու հարազատը: Նա կվանե, ասում էի, այդ տան դռներից սեղանավորներին, հացկատակներին, բանսարկու խռովարարներին, գայթակղություն սերմ անողներին և դրանց փոխարեն կկարգե գետ և խնամակալ անկաշառ, ուղղամիտ և արդարադատ անձանց, որոնք չարի փոխարեն՝ կհաստատեն բարին, խռովությունը կփոխարինեն խաղաղությամբ, ատելությունը սիրով, գայթակղությունը՝ ուղիղ հավատով: Նա կընդլայնե, մտածում էի, լուսավորության ասպարեզը, գործի հրավիրելով անձնվեր սրտերին, արժանավոր

մշակներին և քաջալերելով շնորհն ու առաքինությունը՝ կհաստատե մեր մեջ միայն բարձրին ու արժանավորին երկրպագելու պաշտամունքը: Այդպիսով հետզհետե մեր հոգևոր աշխարհից կհալածվին տգիտությունը և այն շահագործող պաշտոնյաները, որոնց շնորհիվ շատ ջերմ սրտեր են սառել, շատ վեհ հոգիներ վշտացել, բարձրախոհ մտքեր ընկճվել, հույսեր և ակնկալություններ մարել:

Եվ երբ այսպիսով կմաքրվի վեհավայրը շրջապատող մթնոլորտը, երբ սևաթույր ամպերը հորիզոնից կանհետանան և արդարության արևը սուրբ խորանը կողողե, այն ժամանակ այդ արևից կջերմանան նաև սառած սրտերը, կամոքվին, ուժ կառնեն վշտացած հոգիները, նորեն կվերածնվին և վեհ մտքերը, և մեծ հույսերը... Եվ ամենքը միահամուռ, մի սիրտ և մի հոգի՝ կփարին իրենց լուսածին մորը, կտան նրան սիրո կաթոզին համբույր և նրանից կառնեն լույս, ջերմություն և կենդանություն. ... Այս ոգևորված մտորումների ժամանակ, մի հանդուգն զգացմունք խտտում էր սիրտս և լցնում այն անբացատրելի երանությամբ: — Ես մտածում էի թե ինչպիսի հոգեկան հրճվանքով պիտի զգվեմ այն միտքը, թե այս մեծ անձը որ այնքան առաքինաբար յուր նվիրման ընթացքը կատարեց և որքան գոր շնորհներով զարդարվելով ազգի միահամուռ ընտրության արժանացավ, այս վեհ անձը, որ այսօր մեր հոգևոր կյանքի նավը վարում է այսքան իմաստնաբար և հմտորեն հեռացնելով խարակներից ու խութերից՝ ուղղում է դեպի հուսո, սիրո և հավատո անգութ նավահանգիստը, այս անձը, որին սիրում է ամեն ազնիվ հայի սիրտ և որի մեջ նա յուր լավագույն իդձերն ու հույսերն է ամփոփում. սա նա է, որին իմ սիրտը սիրեց, որին իմ հոգին փարեց ջերմազին...: Ապա այս քաղցր ցնորքներին հաջորդում էր մի ուրիշը, առավել քաղցրագույնը. — Ես մտածում էի, թե կհասնե և այն օրը, երբ վեհը կելնե յուր վիճակը պտտելու, յուր ժողովուրդն ու նրա չարն ու բարին տեսնելու: Եվ այդ ժամանակ նա կմտնե նաև հին Սյունյաց աշխարհը, կայցելե նրա լեռներին ու հովիտներին, նրա հեռավոր, բայց սիրազվարճ գյուղերին, նա կհանդիպե նաև մեր այս ավանը, ուր կգտնե ինձ յուր նախկին աշակերտուհուն... Նա կտեսնե նրան՝ աշխարհից հեռացած սև սքեմ հագած և յուր իմաստուն խորհրդով ժողովրդին նվիրված... Կտեսնե նաև այդ նվիրման արդյունքը — իմ ստեղծած գործերը, իմ աշխատությանց պտուղները և դրանց արժեքը արդարությամբ գնահատելով, կօրհնե ինձ, կօրհնե իմ գործերը և այն վայրկյանը, երբ յուր սիրո կայծը վառեց իմ հոգին և պատճառ եղավ այսքան բարիքների... Օ, կարող եք զգալ չափն այն բերկրանքի, որ լցնում էր սիրտս նման վայրկյաններում և մոռացնել տալիս ինձ այն բոլոր վշտերն ու նեղությունները, որ երբևիցե կրել եմ իմ կյանքում. Եվ ինչ կանվանեիք դուք այս զգացմունքը, եսասիրություն, թե սնափառություն, ինձ թվում է թե՛ ոչ մեկն է և ոչ մյուսը:

Այս զգացմունքը, նույնիսկ, անուն չունեք յուր համար: Որովհետև նա չէր արտահայտվում հրապարակով, աղմուկ չէր հանում, մտքեր չէր հուզում, նա միայն թաքուն սնունդ էր տալիս կնոջ զգայուն սրտին և ընդունակ դարձնում նրան անվերջ նվիրվելու, հավիտյան զոհվելու... Եվ սակայն, ավաղ, այս բոլոր երազները անցան իբր ստվեր, իմ քաղցր հույսերը մեռան անհարիր մեռցնելով իրենց հետ իմ սիրտն ու հոգին»

«6 հոկտեմբեր

«Երեկ կամենում էի խոսել այն մասին թե՛ ինչպես հիվանդ մարմինը հիվանդացնում է հոգին, բայց զգացմունքների հոսանքը տարավ ինձ այլ կողմ, ուստի մտադրյալ նյութից հեռացա: Այժմ արդեն կխոսեմ այդ հիվանդության համար, որ ինձ պատահեց գրեթե անսպաս, կամ ավելի ճիշտն ասած, ինքնամոռացությունից: — Տխուր նորության իրազեկ լինելուց և մեր կորուստի չափն ըմբռնելուց

հետո, արդեն աշխարհը մթնել էր ինձ համար: Առաջին վայրկյանից իսկ, ինչպես անցյալներն էլ ասացի, զգացի ծանր շունչը մի ճնշող վիատության, որ ապա հետզհետե իմ էությանը տիրեց: Այդ իսկ պատճառով գործ ու պարապմունք մի կողմը թողած, անձնատուր էի եղել տխուր

մտածությունների: Ոչ միայն գյուղն ու ժողովուրդը, որոնց կարծես մոռացել էի, այլև իմ դպրոցն ու սիրած սաները համարյա այլևս չէին գրավում ինձ: Ես որ ամեն առավոտ նրանց տեսնելով թարմանում ու զվարթանում էի, այժմ ընդհակառակն, աշխատում էի հեռանալ նրանցից, որպեսզի կարողանամ ազատորեն նվիրվել իմ մենավոր մտածությանը, որոնք որքան էլ ծանր ու հոգեմաշ, այսուամենայնիվ, գրավում էին ինձ ավելի քան որևէ ուրիշ զբաղմունք: Այդ իսկ նպատակով առավոտից արդեն հարկ եղածը կարգադրելով ինքս փակվում էի իմ առանձնարանում կամ դպրոցից հեռանալով անտառի մեջ թափառում, որպեսզի կարողանամ ցնորքների աշխարհում գտնել այն սփոփանքը, որ զլանում էր տալ ինձ իրական աշխարհը: Ահա այդպիսի մի օր, երկար թափառելուց հետո, վերադառնում էի տուն: Հասնելով անտառի եզերքին, կամեցա քիչ հանգստանալ, որովհետև թե հոգնած և թե քրտնած էի: Երեկոյան դեմ լինելով՝ հովը փչում էր խիստ անուշ և թռչունները ճովողում էին ծառերի մեջ: Նստելով առվի մոտ ընկած մամռապատ ու հանգիստ ժայռերից մեկի վրա, աչքերս սևեռեցի հեզասահ ալիքներին, որոնց մեջ իրոք տեսնում էի մտքերիս հարազատ պատկերը: Դրանք երկուսն էլ հարաշարժ ու հեղհեղուկ, միշտ միմյանց հրելով և միմյանց թևակոխելով՝ շարունակ դիմում էին առաջ, առանց գիտենալու թե՛ ո՞ր են գնում, ուր է իրենց հանգիստը և ուր վախճանը... Չգիտեմ ախորժ հովը, թե հոգնածությունը քիչ հետո մի տեսակ թմրություն բերին վրաս, ուստի գլուխս ժայռին դնելով կամեցա մի փոքր նիքել և սակայն շուտով քաղցր քուն մտա: Մի քանի ժամ անցավ, չգիտեմ, միայն թե երբ արթնացա շուրջս արդեն մութ էր, աստղերը փայլում էին և լուսնի սկավառակը հուշիկ բարձրանում էր լեռների ետևից: Տեղիցս բարձրանալու ժամանակ զգացի, որ մրսել եմ, որովհետև մեջքս ու թիկունքս սառել էին տախտակի պես: Վերադառնալով տուն, անհանգիստ դրության մեջ գտա սպասուհուս, որ իմ վերադարձը զրոսանքից չէր տեսած այդքան ուշ: Ես նրան հայտնեցի, թե քնով էի անցել առվի ափին, սառը \_\_\_\_\_ ժայռերի վրա: Բարի կինը վախեցավ և գուշակեց, որ անշուշտ ցուրտ առած պիտի

լինիմ, ուստի խորհուրդ տվավ շտապել, կարելվույն չափ շուտ պառկել և քրտնել: Բայց ես զանց արի նրա խորհուրդը: Կյանքն այլևս ինձ համար գրավիչ ոչինչ չունեի: Ուրեմն, հարկ էլ չկար նրա պահպանության համար հոգալ: Հետևյալ առավոտ շատ թույլ էի տեսնում ինձ. մարմինս կարծես ջարդված էր: Իսկ երրորդ օրը, սաստիկ գլխացավն ու ջերմախտի նշանները համոզեցին ինձ, որ արդեն վտանգավոր հիվանդության բռան մեջ եմ... Սակայն այդ համոզմունքն ինձ չտխրեցրեց: Ընդհակառակը, մի թաքուն ուրախություն զգացի, մտածելով թե գուցե այս նորաբաց ճանապարհով ազատվիմ իմ հոգեկան բազմաթիվ վշտերից: — Դուք, իհարկե, այս տողերը կարդալով նախատում եք ինձ իմ փոքրոգի մտածությանը համար, բայց ես արդեն ձեզ ասել եմ թե՛ անկեղծորեն պիտի խոստովանիմ իմ կրածն ու զգացածը: — Եվ ահա այսպես, ես հիվանդացա թոքերի սաստիկ բորբոքումով: Քահանան, իմ սաներն ու նրանց ծնողները շրջապատեցին ինձ իրենց կարեկից հոգատարությամբ, բայց և այնպես չգիտեին թե՛ ինչով իսկապես կարող են առաջն առնել իմ հիվանդության, որ հետզհետե սուր կերպարանք էր առնում: Նրանք, ամենից առաջ աշխատեցին համոզել ինձ բժիշկ բերել տալ քաղաքից, բայց ես չկամեցա և հավատացնում էի թե՛ շուտով պիտի առողջանամ: Տասնևհինգ օր շարունակ ճգնաժամի մեջ էի և այժմ, գուցե, պառկած լինեի հողի տակ, եթե մի հասարակ միջոց — եղջյուրով արյուն առնելը, որի բարերար ներգործության ես չէի հավատում թեթևացրած չլինեի իմ ցավերը: Բայց և այնպես, այսօր արդեն ամիսը լրանում է և ես դեռ անկողնումն եմ: Թեպետ կրծքումս ու թիկունքումս այլևս ցավեր չեմ զգում, բայց հազս սաստկացել է. հաճախ ջերմում և գիշերները քրտնում եմ. մարմինս հետզհետե մաշվում է և մի

քանի որ կա, ինչ տանջող հազիս հետևում է արյուն... ինձ թվում է թե իմ հիվանդությունն արդեն փոխվեցավ և շուտով էլ ինձ գերեզման կտանե. մանավանդ որ տխուր մտածմունքները հանգիստ

չեն տալիս ինձ... Այս պատճառով էր, որ ասում էի թե՛ հիվանդ մարմինը հիվանդացնում է և հոգին: Եթե մարմինս առողջ լինեի, գուցե հոգիս չընկճվեի այս աստիճան կամ հուսահատությունը չհաղթահարեի նրան... Օհ, եթե իմանաք թե որքան ուժ եմ գործ դնում ամեն անգամ մի քանի տող գրելու համար և թե հետո այդ լարումից որպիսի անկումն ու թուլություն է հաջորդում... Բավական է. էլ գրիչ շարժել չեմ կարող...

«12 հոկտ.

«Հինգ օր շարունակ ոչինչ չգրեցի: Չէի կարող, սաստիկ թուլացել եմ. հագս, մանավանդ, հանգիստ չէր տալիս, բայց այսօր կամեցա շարունակել... գեղեցիկ եղանակը գրավեց ինձ: Արևի շողերը լցրել են սենյակս կենդանարար ջերմությամբ. իսկ դուրսը հրաշալի է... Հիշո՞ւմ եք դուք իմ պատուհանի առաջ բացվող տեսարանը — լեռնալանջի թավուտը, ժայռերի սպառվածք և ապա երկուստեք ուռիներով ծածկված ջրաղացի առուն, որ ժայռերին հասնելուց՝ գորեղ շառաչով թափվում է դեպի ձորը... Այդ բոլորն այժմ ողողված է արևի լուսով: Մակայն կանաչը դեղնել է արդեն, ծառերը հետզհետե մերկանում են տերևը: Բնությունն էլ, կարծես, թուլացել, կորցրել է յուր առույգությունը... Բայց ինչու նրա այդ տկարության մեջ մենք դարձյալ գրավիչ մի բան ենք տեսնում. ինչու այնքան սիրով նայում ենք նրա հանգչող կենդանության վրա... Ինձ թվում է, թե այն պատճառով, որ հավատացած ենք թե՛ նա չի մեռնելու, թե նրա կենդանությունը ոչ թե սպառում, այլ հանգստանում է՝ նորեն ուժ առնելու, նորեն վերածնելու, նորեն ստեղծագործելու համար... Հավատացած ենք, թե ամեն ինչ սառեցնող և մահացնող ձմեռը չի կարող սպանել բնության գեղեցկությունը. թե ցրտաշունչ եղանակին կհաջորդե գարունը յուր ջերմացնող արևով, յուր քաղցրասյուրք հովերով, յուր վարսագեղ կանաչով, յուր վառվռուն ծաղիկներով, որ առատորեն ամեն կողմ սփռելով կպճնե, կգարդարե մարզն ու մարմանդը, դաշտն ու բլուրը, լեռն ու քարափը և... մոռացնել կտա մարդկանց ժանտ ձմռան գոյությունը, նրա ցուրտն ու սառույցը, նրա մահաշունչ բռնությունը... Իսկ այդ գարունը, օհ, աստված իմ, ես էլ չեմ տեսնելու... նրա արևն ու հովերը, նրա կանաչն ու ծաղիկները, էլ իմ աչքերը չեն պարաբելու... Բայց, ախ, ինչպես կկամենայի ապրել, նորեն ուժ առնել, նորեն առույգանալ, նորեն աշխատել, տքնել և գարնան բարիքներով իմ ջանքերը պսակել... Ինչո՞ւ, ինչու բնությունից դասեր չենք առնում. ինչու նրա հարազատ ծնունդները լինելով նրա ցույց տված օրինակներով չենք ոգևորվում և թույլ ենք տալիս, որ վհատությունը տիրե մեր հոգուն, գերե մեր սրտերը, սպանե թանկագին տենչերն ու իդեերը... Չէ որ գիտենք, թե՛ մահաշունչ ձմռան հաջորդում է միշտ կենսաբեր գարունը, չէ որ սա արդեն հավիտենական ճշմարտություն է... Եվ սակայն, ավաղ, սխալ գործեցի, մոռացա մի վայրկյան մեծ ճշմարտությունը և այժմ արդեն ուշ է... Չպետք է մոռանալ և ոչ իսկ մի վայրկյան...

«14 հոկտ.

«Կամեցա դարձյալ գրել, բայց տեսնում եմ, որ ուժ չունիմ. ինքս չկարողացա նստել անկողնում. Մանիշակն օգնեց... Ախ, այս հրեշտակը, այս բարի և ազնիվ հոգին... մի վայրկյան չի հեռանում ինձանից, իսկ Պետրոսը շարունակ պտտում է մյուս սենյակում: Ինչպե՛ս տխուր ու ճնշված են նրանց մատաղ սրտերը... Իմ ցավերը չեն տանջում ինձ այնքան, սրանց արտասուքն է, որ մորմոքեցնում է սիրտս... Օհ, այժմ, այժմ միայն կցանկանայի ապրել, որ սրբեի սրանց արցունքը և սովորեցնեի լալ, երբեք լալ, այլ արիանալ և գործել... ավաղ, այդ դասը ես չտվի նրանց, որովհետև

չգիտեի թե՛ հարկ կլինի լալ... այժմ տեսնում եմ, որ անհրաժեշտ դասը մնացել է առանց խոսելու... Ի՞նչ անեմ, ես այլևս անկարող եմ... մնում է օրինել այն բերանները, որոնք այդ դասը կխոսեն ոգևորությամբ...

«15 հոկտեմբեր

«Գրել այլևս անհնար է... գրիչս ընկնում է... նրա փոխարեն գորանում է արտասուքս... ծրարեմ այս

թերթերը, եթե առողջացա, դարձյալ կգրեմ, եթե ոչ, խոսածս էլ բավ է... արդեն գիտեք թե ինչու մարեց կրակը... ընդունեցեք իմ ջերմագին ողջույնը... Եթե երբևիցե պատահեք իմ սիրելի ուսուցչին, պատմեցեք նրան իմ մասին մի քանի բան... Ասացեք, որ յուր քաղցր պատվերի համաձայն՝ մեռավ ցորեանն, զի բազում արդիվնս արասցե...»:

Ձեր քույր-Աննա»:

Այս ամենը կարդալու ժամանակ՝ ես շատ անգամ հուզվեցա և երբեմն հագիվ էի ինձ զսպում, որ բարձրաձայն չհեկեկամ: Իսկ երբ աննաման կույսի վերջին խոսքերը կարդացի, արտասուքս սկսավ աղբյուրի պես հոսել և ես գլուխս ձեռքերիս մեջ առած՝ երկար լաց էի լինում, ինչպես թանկագին հարազատը կորցրած մի մարդ:

Հետևյալ առավոտ, շատ վաղ գնացի քույր-Աննայի գերեզմանը համբուրելու: Նա գտնվում էր եկեղեցու արևելյան կողմը, փոքրիկ անտառի եզերքին, գեղեցիկ ու նորաստեղծ բարձրավանդակի վրա: Մի պարզ, սպիտակ տապանաքար ծածկում էր այդ սուրբ գերեզմանը, որի վրա սավառնում էին նորատունկ ուռիներ: Բարձրավանդակն ամբողջապես զարդարված էր ծաղկանց տունկերով, և նրանց շուրջը պատելով խոխոջում էր փոքրիկ, ականակիտ ամուսնացյալ, որ յուր մշտամոռունջ մրմունջը ուռիների սոսավունին խառնելով՝ ասես թե հավիտենական մեղեդիներ էր երգում անզուգական կույսի հանգստյան համար:

Մենավոր շիրիմի շուրջը տիրում էր վսեմ, խորհրդավոր լռություն, որ մարդուն ականա դարձնում էր ջերմեռանդ: Ես խորին ակնածությամբ մոտեցա շիրիմին և երկյուղածությամբ համբուրեցի այն:

Տապանի վրա, հանգուցյալի ցանկությամբ փորագրված էր միայն երեք բառ. «Քույր-Աննայի հանգիստը»: Բայց որքա՛ն մտքեր, որքա՛ն պատմություններ կային այդ պարզ բառերի մեջ...

Այդտեղ ամփոփված էր գողտրիկ զգացմունքների, սուրբ գաղափարների և ազնվագույն ոգևորության մի ամբողջ աշխարհ... Այդ կանաչագարդ շիրիմի մեջ հանգչում էր հայրենիքի սուրբ սիրո նահատակը — մարմնացյալ անձնվիրությունը, որ սրի դեմ չէր գնացել, վառողի դեմ չէր խիզախել, բայց մղել էր նույն կռիվը, ինչ որ ամեն մի մեծ հերոս... Ո՞ր ճշմարիտ հայրենասերը չէր խոնարհիլ յուր գլուխը այդ սրբազան շիրիմի առաջ և որ երիտասարդի սրտին՝ սեր ու եռանդ չէր ներշնչի «Քույր-Աննայի հանգիստը»...

Համբուրելով այդ շիրիմը, ես չոքեցի նրա առաջ՝ աղոթեցի սրտահույզ: Իմ աղոթքը մի ջերմ ցանկություն էր, տեսնել մեր մեջ, գոնե այսուհետև, քույր-Աննային և նրա ուսուցչին արժանավոր հետևողներ:\_\_\_